

13-14(616-617)

1.06.2021

Հրատարակվում է
1999թ. սեպտեմբերից

Ճանաչել զինասարություն և զխրատ, իմանալ զբանս հանճարոյ

ԼՍԱՐԱՐ

Лусарар

ԿՐԹԱԳԻՏԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԹԵՐԹ

Lusarar

ՄՇԱԳՈՅՈՒԹՅԱՆ ՄԵՐ ԱՆՓՈՓՈՒՍ ԱՅՅԵՏՈՍԱԸ

1992 թվականից հետո, երբ մայիսի 28-ը պաշտոնապես ընդունվեց որպես Հանրապետության օր, երևի առաջին անգամ համազգային տոնը նշում ենք առանց ներքին հրճվանքի: Պատճառն ինքնին հասկանալի է. անցյալ տարվա շաճանը դարաբաղա-աղորթեցնական ճակատում կրած ցավալի պարտությունը անկունային տրամադրություն է ստեղծել հայերիս մոտ, որն արտահայտվում է ինչպես ռազմաքաղաքական ոլորտում, այնպես էլ երկրի կյանքի մի շարք բնագավառներում:

Պարտության գիտակցումը ծանր զգացողություն է, հատկապես հայրենիքի մի զգալի հատվածի կորստի ու բազմաթիվ զոհեր ունենալու պարագայում, բայց ցանկացած անհաջողություն հաղթահարելի է, եթե կարողանում ես ինքնուրույն ծնկել ու բարձրանալ: Դրա համար ներքին ուժ ու կամք է պետք, որը հայ ժողովուրդն անկասկած ունի: Եթե չունենար՝ հեռավոր 1918-ին Սարդարապատում չէր կարողանա թուրքական սելավի առաջը առնել: Յեղասպանություն կրած և հայրենագրված ազգի վերքերը դեռ արնածոր էին, երբ թուրքական բանակը ներխուժեց Արևելյան Հայաստան՝ մի վերջին հարվածով ոչնչացնելու հայի հազարամյա գեներ: Հայոց աշխարհագրորդ որտեղի՞ց գտավ անհրաժեշտ կորով ու ուժ՝ հաղթելու թուրքաց կանոնավոր բանակին: Նրանց երակներում, հարկավ, եռում էր Հայկ մահապետի, Վարդան Մամիկոնյանի, Գևորգ Մարգարեանու խրոխտ արյունը: Այդ արյունը հայի երակներում կհոսի միշտ, քանզի «հայերեն են տանջում մեր ցավերը»:

Ասել ենք ու կրկնում ենք՝ պատմության քառուղիներով շատ ազգեր են եկել ու անցել, որոնց մասին այսօր միայն պատմաբաններն են հիշում: Ժամանակագրական մույն ակունքից սկիզբ առած հայ ազգը, սակայն, դիմագրավելով իրեն պատուհասված փորձություններին, կարողացել է գոյատևել, հերոսական ջանքերի գնով վերակերտել իր պետականությունը և այսօր երկիր մոլորակի վրա արժանապատվորեն գոյակցում է տարալեզու և տարամշակույթ ազգերի հետ: Չհպարտանա՞նք... Պարտությունները ժամանակավոր են, իսկ ոգին՝ հավերժական, այն ունակ է անխտոր առաջնորդելու դեպի նորանոր հաղթանակներ:

Գլուխներս բարձր բռնած, ցավն ատամների տակ լուռ սեղմած՝ ձեռք-ձեռքի տանք ու զնանք առաջ: Դարերի քամուց, այո, մաշվել-փոքրացել ենք, բայց դրա հետ մեկտեղ կոշտացել ենք քամուց: Հայի հոգու անսահման բարության հետ աշխարհին ցույց տանք նաև նրա դարահոտ կոշտությունը: Դա է մշտագոյության մեր անփոփոխ այցետոմսը:

«ԼՈՒՍԱՐԱՐ»

ԳԱԼԻՔ ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐԻ ՄԵԿՆԱՐԿ



Մայիսի 30-ին Արցախը հանդիսավորությամբ դիմավորեց Սամբոյի եվրոպայի երիտասարդների չեմպիոն (58 կգ) Դավիթ Հովսեփյանին:

«Դավիթի հաղթանակի լուրը հասցնելու և հարգանքի տուրքը մեր զոհված հերոսներին մատուցելու համար Եղբայրական գերեզմանոցում էինք... Տղերք, ձեր գործը շարունակվելու է...»,- իր ֆեյսբուքյան էջում գրառում է արել ԿԳՄՍ նախարար Լուսինե Ղարախանյանը:

Աղբյուրում հաղթած շուշեցի հայրորդի, թող սա լինի մեր գալիք հաղթանակների սկիզբը: Բոլորիս սրտից բխած ցանկություն:

ՄՓՅՈՒԹՅՈՒՆ ԴԵՏԷ Ե ԴԻՏԵԼ ՈՐՊԵՍ ՄԵՐ ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ, ԱԶԳԱՅԻՆ ԵՐՈՒԹԻ ՄԵԿՏԵՂՄԱՆ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԱՌԱՆՅՔ

Մայիսի 20-22-ը աշխատանքային այցով ՌԴ Դրիմի Սիմֆերոպոլ քաղաքում էին ԱՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Լուսինե Ղարախանյանը և Սփյուռքի հարցերով ԱՀ նախագահի խորհրդական Ազատուհի Սիմոնյանը, որոնք այնտեղ էին Դրիմի հայ համայնքի հրավերով՝ մասնակցելու նրա համաժողովին:

Քննարկված հարցերի, ստացած տպավորությունների շուրջ զրուցեցինք ԱՀ ԿԳՄՍ նախարար Լուսինե ՂԱՐԱՄԻՆՅԱՆԻ հետ:

- Տիկին Ղարախանյան, ի՞նչ համաժողով էր դա, ովքեր էին մասնակցում, ի՞նչ նպատակ էր հետապնդում:

«Դրիմյան կամուրջ. ազգային դիվանագիտությունը գործողության մեջ»։ այս խորագիրն էր կրում համաժողովը: Մասնակցում էին հիմնականում ՌԴ հարավային տարածաշրջանի՝ Կրասնոդարի, Սոչիի, Աբխազիայի, Դոնի Ռոստովի, Ստավրոպոլի, Պյատիգորսկի, ինչպես նաև Մոսկվա քաղաքի և մարզի (Ք. Լյուբեցկ), Սանկտ Պետերբուրգի, Տվերի, Սարատովի հայ համայնքների ներկայացուցիչներ, որտեղ արդեն 1 մլն 100 հազար հայ է բնակվում: Դրիմում հզոր հայկական համայնք կա, որտեղ հայկականության ներկայությունը մեծ է ճարտարապետական շինությունների, եկեղեցիների և մարդկանց համախմբվածության առումով: Համաժողովում գլխավորապես քննարկվել են համայնքի առջև ծառայած ժամանակակից մարտահրավերները, և թե հայությունը ինչպես է արձագանքում դրանց: Որպես կարևորագույն մարտահրավեր դրված էր նաև ինքնության պահպանման հարցը: Քննարկվել են համայնքների գործունեության հենարանները: Համաժողովի առաջնությունն էր մասնակցությանը: Մենք հանդես ենք եկել էլույթներով: Ազատուհի Սիմոնյանը ներկայացրել է պատերազմի պատճառով Արցախի ընդհանուր վնասները և առաջ քաշել Շուշիի 4 համայնքների զարգացման ծրագիրը: Ես ներկայացրել եմ ԿԳՄՍ համակարգի նյութական, ֆիզիկական, բարոյական կրթությունը, այս համապատկերին մշակվող վերականգնման և զարգացման փուլի ծրագրերը:

- Հավանաբար շրջապայել եք նաև հայկական տեսարժան վայրերում, հանդիպումներ ունեցել:

- Այո, առաջին օրը հյուրընկալվել ենք Յալթայի Սուրբ Հռիփսիմե եկեղեցում, երկրորդ օրը՝ Սուրբ Խաչ եկեղեցում, որը 14-րդ դարի վանական համալիր է: Մեզ ծանոթացրել են Սիմֆերոպոլի սրտում կառուցված մի շինության հետ, որը ծառայելու է որպես հայկական ազգագրության կենտրոն: Այն այժմ կահավորման փուլում է: Ծառայելու է նաև որպես գիտահետազոտական կենտրոն, որտեղ մարդիկ ծանոթանան Դրիմի, և ոչ միայն, ռուսահայ ներկայության հետ:

Ուշագրավ էր, որ Սիմֆերոպոլի ազգագրական թանգարանում կա առանձին հայկական բաժանմունք, որտեղ ներկայացված են Դրիմի հայերի կենցաղը, մշակույթը, արվեստն արտացոլող բազմաթիվ նմուշներ: Մայիսի 21-ին այդտեղ կայացել է գիտագործնական կոնֆերանս, որն ուղեկցվել է մշակութային ծրագրով: Հյուրերի համար կազմակերպվել է էքսկուրսիա թանգարաններ, այդ թվում՝ Դոնսկոյի հայկական ազգագրական թանգարան: Հետագա քննարկումներն ընթացել են ոչ ֆորմալ

մթնոլորտում. եկեղեցում կից տանը, հին հայկական գերեզմանափոխաձևավորում: Այստեղ նաև ծաղիկներ ենք խոնարհել 1915թ. Ցեղասպանության զոհերի հիշատակին կառուցված հուշարձանին:

Համաժողովից ամենատպավորիչ հաղորդագրությունն այն էր, որ իմացա Աբխազիայում գործող 24 հայկական համակրթական դպրոցների մասին, որոնք առաջնորդվում են մույն ծրագրերով, ինչ՝ Հայաստանի և Արցախի դպրոցները: Իսկ մնացած համայնքներն ունեն կիրակնօրյա դպրոցներ:



- Համագործակցության առաջարկներ եղե՞լ են:

- Հրավերներ ենք ստացել տարբեր համայնքներից, մասնավորապես՝ Կրասնոդարի, Աբխազիայի: Ի դեպ, վերջինիս հայկական համայնքի ներկայացուցիչը Աբխազիայի ազգային հերոս է և ոտքը կորցրել է Աբխազիայի մարտերում՝ որպես առանձին հայկական ջոկատի հրամանատար և որտեղ զոհվել է նաև 23 հայեր: Ինչպես հասկացա, Աբխազիայի ղեկավարությունը արժևորում է հայերի դերը, և այնտեղ ստեղծված են համայնքային կյանքը արժանապատիվ կազմակերպելու համար բոլոր պայմանները: Դրիմում համայնք կա Հայկական ամուսնով, որտեղ բնակչության 90 տոկոսը հայեր են:

Շփվել ենք պետական ու տնտեսության ոլորտներում իրենց լավ դրսևորող շատ ազդեցիկ հայերի հետ: Նախատեսվում են համայնքների ղեկավարների այցեր Արցախ:

- Ի՞նչ եք կարծում, լա՞վ է, որ հզոր համայնքներ ունենք դրսում:

- Ես երկակի զգացում էի ապրում: Առաջինը, որ ուրախալի է, այն էր, որ զգացի հայկական համայնքների ապրումակցման խորը զգացումը Արցախի նկատմամբ: Երկրորդը, որը տխրություն է պատճառում, այն է, որ հայերը հայրենիքից դուրս հայրենիք են կառուցում: Մրցակցում են հայրենիքից դուրս եկեղեցիներ կառուցելու, կիրակնօրյա դպրոցներ բացելու համար, բայց որը մեծ հաշվով խաբկանք է: Սակայն համաժողովի արդյունքում մեկ կարևոր եզրահանգման եկանք. Սփյուռքը պետք է դիտել մեր մտավոր, բարոյական ռեսուրս-

ների մեկտեղման առաջնություն: Մենք պետք է Սփյուռքի մտավոր ուժերը բերենք նաև Արցախ, և ոչ թե Սփյուռքը դիտվի միայն նյութական ռեսուրսի ընկալումներով: Դա սխալ է: Սփյուռքը պետք է դիտել մեր միասնականության, որպես մեր ամբողջ ազգային ներուժի մեկտեղման և համընդհանուր ազգային ծրագրերի մասնակից: Սփյուռքի լավագույն կադրերը պետք է հրավիրվեն աշխատելու այստեղ: Մեր լավագույն ուղեղները, որոնք ոչ ճիշտ քաղաքականության արդյունքում հեռացել են, այսօր կարող են գալ ու մասնակցել Արցախի և ընդհանրապես հայության փրկությանը:

Համաժողովը հուզականորեն հագեցած միջոցառում էր, բայց այդտեղ չկար պարզունակ սենտիմենտալություն: Հուզառատ էր, որովհետև ներկայացվում էր հետպատերազմյան վիրավոր Արցախը: Բայց Արցախը ներկայացնելուց հետո կոնկրետ համակարգված առաջարկներ եղան, և տարբեր համայնքների կողմից պատրաստականություն՝ առաջ մղել բոլոր այն ծրագրերը, որոնցով Արցախը կնմա հայկական, ոչ միայն կվերականգնվի, այլև կզարգանա: Մի քանի ծրագրեր տեղում ֆինանսավորվելու պատրաստականություն եղել է, բայց դեռ չեն ուզում այդ մասին ժամանակից շուտ հայտարարել:

Համաժողովի առաջնություն ինքնության՝ որպես քաղաքակրթական բաղադրիչի



պահպանումն ու արդիականացումն էր, ու հենց այդ համատեքստում Արցախի կողքին կանգնելը: Ոչ մենք էինք՝ որպես պատվիրակներ, Սփյուռքն ընկալել որպես նյութական ռեսուրս, ոչ էլ նա է մեզ դիտում որպես օգնություն հայցող օբյեկտ: Սխալ է Սփյուռքի հնարավորությունները դիտարկել սուկ պրագմատիկ ընկալումների կոնցեպտներով: Սփյուռքը մենք պետք է օգտագործենք լրբիստական, ճիշտ հաղորդագրություններ անելու, ինքնությունը պահելու, մեր հոգևոր ու գաղափարական ինքնակազմակերպմանն առնչվող հարցերով:

Համաժողովի նորությունն այն էր, որ որոշվեց ստեղծել բոլոր համայնքների ցանցային, ինտերտեղիցումալ համակարգ, որպեսզի մեկ հարթակից հնչեցվեն բոլոր խնդիրները, բոլոր հաշվետվությունները, և այն լինի բախանցիկ, հաշվետու, ինքնավերլուծվող կառույց:

Ս. ԽԱՀԱՏՐՅԱՆ

ՆՈՐԱՐԱՆԻՑ

ՄԵՋ ԸՆՏ

Մենք ծնվել ենք, որպեսզի մենքն ենք, սակայն մինչ այդ պետք է ապրել:

Շառլ Ազնավուր

Մայիսի 20-ին Ստեփանակերտի Շառլ Ազնավուրի անվան մշակույթի կենտրոնի տարածքում գտնվող հայ-ֆրանսիական բարեկամության պուրակում բացվեց ֆրանսահայ աշխարհահռչակ երգիչ, շանսոնյե, երգահան, բանաստեղծ, գրող, կինո-դերասան, հասարակական գործիչ Շառլ Ազնավուրի կիսանդրին: Այդ պատիվը տրվեց կիսանդրու հեղինակ, քանդակագործ Յուրի Յովհաննիսյանին և Շառլ Ազնավուրի անվան մշակույթի կենտրոնի տնօրեն Արմեն Յովսեփյանին, որոնք իրենց ելույթներում բարձր գնահատեցին մեծանուն երգչի դերն ու վաստակը համաշխարհային մշակույթում և հայ ժողովրդի կյանքում:

- Հպարտ ենք, որ մեր կենտրոնը կրում է ազգանվեր գործչի անունը: Սիրելի Շառլ, Ձեր անունը միշտ վառ կմնա յուրաքանչյուր հայի սրտում,- ասաց Ա. Յովսեփյանը:

- Այսօր, երբ հայ ժողովուրդը ապրում է իր պատմության ծանրագույն օրերից մեկը, մենք մեր կողքին տեսնում ենք Ֆրանսիային՝ իր վճռական հորդորով: Եվ որպես դրա առիթավատչյալ՝ Ազնավուրի կիսանդրին թող անզուգական փայլ հաղորդի Արցախի մայրաքաղաքին՝ ի փառս հայ և ֆրանսիական ժողովուրդների դարավոր բարեկամության և մղի մեզ նորահունչ հաջողությունների: Հուշարձանը երախտագիտության արտահայտություն է հայ ժողովրդի արցախյան հատվածի կողմից ֆրանսիական ժողովրդին,- ասաց Յու. Յովհաննիսյանը:

Այսուհետ այս տարածքով անցնողները,

որքան էլ տխուր լինեն իրենց մտորումներով, հայացքներն ուղղելով Շառլ Ազնավուրի կիսանդրուն, իրենք էլ կողողվեն նրանից հորդող ժպիտով: Չէ՞ որ մեծ հայի հոգին սավառնում է նաև Արցախի երկնակամարում, մասնավորապես նաև այստեղ: Տարիներ առաջ՝ 2009 թվականին, այստեղ նորից հանդիսավոր բացման արարողություն էր, որին ներկա էր աշխարհահռչակ շանսոնյե: Մեծն Շառլը Արցախում էր «Քեզ համար, Հայաստան» ծրագրի շրջանակում: Արցախի ղեկավարության ուղեկցությամբ նա այցելել է իր անունը կրող մշակույթի կենտրոն և կտրել բացման կարմիր ժապավենը:

Այդ օրվա երջանկներից էին նրանք, ովքեր Ստեփանակերտի Վերածննդի հրապարակում

նավուրի և նրա դստեր՝ Սեդայի կատարմամբ Սայաթ-Նովայի «Աշխարհումս ախ չիմ քաշի» երգի ներքո:

Ազնավուրի կապը հայրենիքի հետ շատ

նաև հայկական արձաններին մինչև վերջ անմնացորդ նվիրվածությամբ մեջ: Հայաստանի ազգային հերոսի գործունեությունն ամբողջովին նվիրված էր մայր հայրենիքի գորացմանը:

«Պետք է գիտակցենք, որ ունենք գեղեցիկ մի երկիր, որը պետք է զարգացնել, այլապես այն մի օր կարող է անհետանալ այնպես, ինչպես որոշ հին քաղաքակրթություններ: Իսկ դրա պատասխանատվությունը կկրեն Հայաստանի ղեկավարները»,- մարգարեաբար զգուշացնում էր Մեծ հայրը: Ցավոք, այսօր հայտնվել ենք այդ իրավիճակում:

Միևնույն ժամանակ Շառլ Ազնավուրը նաև այս միտքն է հայտնել, որը մեզ համար դարձյալ ականջի օղ պետք է լինի.

«Երբեք չեն սիրել պարտվել: Երբեք չեն կարողացել հաշտվել պարտության հետ: Պարտություններով ու դժվարություններով լի իմ կարիերայի առաջին տարիներին ուղեկցող ողջ դառնությունը և ծաղր ու ծանակը ընտանիքիս էր բաժին հասնում...»

Ամեն անգամ, երբ տուն էի վերադառնում, ականջներս դեռ լի էին հանդիսատեսի աղմուկ-աղաղակով, սուլոցներով ու վիրավորանքներով, ծնողներս իմ կողքին էին՝ պատրաստ լսելու ու մխիթարելու: Կորած է այն մարդը, որ հենարան չունի: Իմ հենարանը իմ ընտանիքն էր՝ մայրս, հայրս, քույրս...

Ապրելու համար մի ելք կա միայն: Քեզ զիջում են միայն այն դեպքում, երբ քո կարիքն են գզում: Իսկ եթե չէ, բարի ճանապարհ: Նշանակում է՝ նախ պետք է օգտակար դարձնես քեզ, ապա՝ անհրաժեշտ:

«Երբ ռադիոընդունիչի կոճակը կսեղմեն և հեռու-հեռուներեն կլսեն Ազնավուրի երգերը, միտքս կըսեն.

- Ապրիր, երբայր, դուն ալ հաղթեցիր, դուն մեծ ու տոկուն հայ մըն ես»,- եթե մեր մեկ այլ աշխարհահռչակ հայի՝ Վիլյամ Սարոյանի համար էր Ազնավուրը տոկուն հայի խորհրդանիշ, ապա որչա՞փ այդպիսին պիտի լինի մեզ համար:



սերտ էր. ամբողջ կյանքը ապրելով Ֆրանսիայում՝ երբեք չի մոռացել, որ հայ է: Նրա տիեզերական մեծությունը տեսանելի էր

...ՄԵՐ ՄՐՏԵՐՈՒՄ

Շառլ Ազնավուրի ծննդյան տարեդարձին էր նվիրված Ստեփանակերտի Ա. Դուլյանի անվան հ. 2 հիմնական դպրոցի 8-րդ «ա» դասարանի դասղեկի ժամը: Դա հերթական դաս չէր, երբ դասղեկը որևէ թեմայի շուրջ զրուցում է աշակերտների հետ: Մեծարձան, երախտագիտության, հարգանքի ու սիրո միջոցառում էր՝ նվիրված մեծ հային: Հայաստանի պատմության գործունեության համար Ազնավուրն արժանացել է ՀՀ ազգային հերոսի բարձր կոչման, Արցախի Հանրապետության «Գրիգոր Լուսավորիչ» շքանշանի: Դասղեկ Լուսինե Արզանգուլյանը և աշակերտները պատրաստվել էին առանձնահատուկ ձևով. այդ առթիվ բոլորը նույնիսկ կրում էին մեծ շանսոնյեի դիմանկարով սպիտակ շապիկներ:

րեց աշխարհն իր արվեստով նվաճած մեծ հայի կենսագրությունից դրվագներ: Պատմեց, որ ապագա երգիչը ծնվել է Եղեռնից

Ազնավուրի երգերից, աղջիկները պարեցին «Աշխարհումս» երգի տակ, միասին երգեցին «Քեզ համար, Հայաստան»-ը, որը երկրաշարժից անմիջապես հետո գրել է Ազնավուրը և երգել Ֆրանսիայի նշանավոր երգիչների հետ: Դասղեկի ժամին ներկա էին

վար Անդրանիկը, իրենց գլուխները հանգիստ կոնեն բարձին, քանի որ քնելուց առաջ մի պահ հաշիվ տալով իրենց՝ գոհունակության զգացում կապրեն, որ ազգանպաստ գործ են կատարել՝ մեծ հայի կենսագրությունը սերտելով, նրանից սովորելով կյանքի դժվարությունները հաղթահարելը: «Իմ ճանապարհը հեշտ ու հանգիստ չի եղել: Շատ դառնություններ են ճաշակել այդ ճանապարհին՝ երեսիս փակված դռներ, հեզմանքով ու արհամարհանքով լի ժպիտներ, կատակի տակ քողարկված չարախոսություններ... Կասկածն ու հուսահատությունը, չհասկացված լինելու ու բախտ չունենալու զգացողությունը հաճախ են գետնել ինձ: Բայց ցավս թաքցրել են, քաշվել են պատյանիս մեջ և ուժ հավաքել դիմանալու, պաշտպանվելու համար».

աշխարհահռչակ հայի այս խոստովանությունը թերևս կօգնի նոր սերունդին՝ կանգ չառնել իրենց երազանքի ճանապարհին, տուկալ և հաղթահարել ամեն խոչընդոտ:

Դասարանը հոտնկայա հարգանքի տուրք մատուցեց դարի երգչի, պատերազմում նահատակված հայորդիների հիշատակին, ծաղիկներ դրեց դպրոցի փառքի սրահում, Ազնավուրին նվիրված դասարանի անկյունում:



Լ. Արզանգուլյանը ներկայացման գաղթականներ Միշա և Քնար Ազնավուրյանների ընտանիքում 1924 թվականի մայիսի 22-ին, Փարիզի Սեն ժերմեն դե Պրե քաղամասում: Դասղեկի խոսքը շարունակեցին աշակերտները՝ յուրաքանչյուրը ներկայացնելով Ազնավուրի կենսագրությունից մի հատված: Նրանք կիթառի նվագակցությամբ կատարեցին

մազապուրծ հայ գաղթականներ Միշա և Քնար Ազնավուրյանների ընտանիքում 1924 թվականի մայիսի 22-ին, Փարիզի Սեն ժերմեն դե Պրե քաղամասում: Դասղեկի խոսքը շարունակեցին աշակերտները՝ յուրաքանչյուրը ներկայացնելով Ազնավուրի կենսագրությունից մի հատված: Նրանք կիթառի նվագակցությամբ կատարեցին



դպրոցի տնօրեն Լուսինե Սարտիրոսյանը, կազմակերպչական աշխատանքների գծով փոխտնօրեն Կարինե Աբրահամյանը, ուսուցիչներ, ծնող: Տնօրենը գովեց դասղեկի գլխավորությամբ դասարանի քրտնաջան աշխատանքը՝ ասելով, որ մեծ գործ են արել: Նրանք, ինչպես կատարողները

ՕՐԿԱ ԹԵՄԱՅՈՎ

ԱՐՑԱՄԻ ԵՐԵՒԱՆԵՐԸ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ ԵՆ ՈՒՋՈՒՄ
ՀՈՒՆԻՍԻ 1-Ը ԵՐԵՒԱՆԵՐԻ ԴԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱՉԳԱՅԻՆ ՕՐԻ Է

Լրագրող Ծովինար ԳՐԻԳՈՐՅԱՆԻ հարցազրույցը ԱՅ մարդու իրավունքների պաշտպան Գեղամ ՍՏԵՓԱՆՅԱՆԻ հետ



- Պատերազմը հանցագործություն է մարդկության դեմ և առաջին հերթին մարդկության ամենամասնաշաղկապ մասի՝ երեխաների դեմ: Աշխարհը Արդարադատության սանձազերծած ազդեցիկ պատճառով Արցախի երեխաների հիմնական իրավունքներ են խախտվել:

- Մարդու իրավունքների պաշտպանի կողմից արձանագրվել են ինչպես առհասարակ Արդարադատության կողմից պատերազմի ընթացքում քաղաքացիական բնակչության դեմ հանցագործությունները, այնպես էլ կոնկրետ երեխաների իրավունքների խախտումների դեպքերը: 2020թ. սեպտեմբերի 27-ից՝ պատերազմի առաջին օրվանից, ՄԻՊ աշխատակազմը նախաձեռնել է փաստահավաք առաքելություն, և պատրաստվել են զեկույցներ, որոնք տրամադրվել են միջազգային համապատասխան կազմակերպություններին: Հրապարակել ենք նաև երեխաների իրավունքների խախտումների վերաբերյալ զեկույց, որում փաստերով ներկայացրել ենք, թե Արդարադատության կողմից իրականացված ռազմական գործողություններն ինչ հետևանքներ են թողել Արցախի երեխաների պաշտպանության վրա: Արձանագրել ենք, որ 1 երեխա զոհվել է, 9-ը՝ վիրավորվել: Պատերազմի ամբողջ ընթացքում խախտվել է երեխաների կրթության իրավունքը: Առավել ամփոփված վայր տեղափոխվելը հրամայական էր, և փաստորեն Արցախում չեն գործել կրթական հաստատությունները: Արցախի երեխաներն ստիպված են եղել կրթություն ստանալ Երևանում, ՀՀ մարզերում և կամ ընդհանրապես չեն ստացել: Ուսումն իրենց միջավայրից դուրս շարունակելը հանգեցրել է հոգեբանական բազմաթիվ խնդիրների:

Արձանագրել ենք նաև հոգեբանական հետևանքները, որ պատերազմն ունեցել է երեխաների վրա: Հարյուրավոր երեխաներ կորցրել են ընտանիքի անդամներին՝ հայր, եղբայր, պապ, և խախտվել է երեխայի՝ միասնական ընտանիքում ապրելու իրավունքը: Երեխաներն ընտանիքների հետ ապաստանել են նկուղներում, որտեղ պահպանված չէին սանիտարահիգիենիկ պայմանները, չկային կենսապահովման համար նվազագույն պայմաններ: Այդպիսով խախտվել է նաև մեր երեխաների՝ ընտանիքների հետ բնականոն պայմաններում ապրելու իրավունքը ու բազմաթիվ այլ իրավունքներ:

- Պարոն Ստեփանյան, քանի՞ երեխա է տարհանվել պատերազմի ընթացքում և քանի՞ն է բռնի տեղահանվել:

- Պատերազմի ընթացքում տարհանված երեխաների թիվը մոտ 24 հազար էր:

Հրադադարի հաստատվելուց հետո ունենք մոտ 10 հազար տեղահանված երեխա: Նրանք զրկված են իրենց ընտանիքում, իրենց միջավայրում և ապրելու իրավունքից: 10 հազարից մոտ 8 հազարը դարձյալ առանց սակ է: Մի մասը՝ 2000-2500 երեխա, վերադարձել է Արցախ և կրթությունը շարունակում է այստեղ: Մնացած մասը դեռևս չի վերադարձել և ընտանիքի հետ գտնվում է Հայաստանում: Կան երեխաներ, որոնք հավանաբար արտագաղթել են, նաև ՀՀ-ում չեն:

- Մարդու իրավունքների պաշտպան այցելել է Հայաստանում ժամանակավորապես հանգրվանած երեխաներին: Ստեփանակեր-

տի և Բերձորի երեխաների խնամքի ու պաշտպանության գիշերօթիկ հաստատությունները չեն գործում: Այդ երեխաներն առանց այն էլ խոցելի էին, ինչպե՞ս են հարմարվել նոր միջավայրին:

- Երևան կատարած աշխատանքային այցի շրջանակում այցելել են Ստեփանակերտի և Բերձորի գիշերօթիկ հաստատությունների սաներին: Քանի որ պատերազմի ժամանակ երեխաները տեղափոխվել են Հայաստան, մարդու իրավունքների պաշտպանի և նրա աշխատակազմի համար դժվար էր պարբերաբար այցելել երեխաներին՝ նրանց խնամքի և իրավունքների պաշտպանությունը մշտադիտարկելու: Բայց այս խնդիրը շատ հեշտությամբ կարգավորեցինք ՀՀ մեր գործընկեր կառույցի հետ համագործակցությամբ: ՀՀ ՄԻՊ աշխատակազմից պարբերաբար այցելում էին մեր երեխաներին: Եթե խնդիրներ էին առաջանում, ապա նրանց միջամտությամբ անպայման լուծվում էին: Ստեփանակերտի և Բերձորի գիշերօթիկ հաստատությունները միավորվել են, Բերձորի գիշերօթիկն արդեն չի գործելու: Երեխաները, որ գտնվում են «ՍՕՍ մանկական գյուղ Կոտայք» հաստատությունում, հունիսի կեսերից հետո, դասերն ավարտելով, վերադառնալու են Ստեփանակերտ: Ստեփանակերտի գիշերօթիկ հաստատության շենքը վերանորոգվում է: Կուզենայի մեկ անգամ ևս բարձրաձայնել, որ նրա պայմանները խիստ բարելավման կարիք ունեն: Իհարկե, վերանորոգմամբ որոշ չափով կլուծվեն խնդիրները, սակայն տարածքը ցանկապատելու անհրաժեշտություն կա, և քաղաքաշինության նախարարությունը տեղյակ է: Խաղաղարարական իրավիճակի ամրապնդման և չի ապահովում երեխաների ազատ ժամանցի պատշաճ կազմակերպման իրավունքը:

Ինչ վերաբերում է մանկական գյուղում մեր երեխաների կեցության պայմաններին, ապա տպավորված եմ: Նրանց կրթության, առողջության պահպանման, խնամքի, ազատ ժամանցի, պատշաճ սնվելու համար բոլոր պայմանները ձգձգվածի պայմաններում կանգնում են օր առաջ վերադառնալ Արցախ կարողություն են:

- Մարդու իրավունքների պաշտպանությանը զբաղվող կառույցներն ի՞նչ դեր են ունեցել արցախյան երեխաների պաշտպանության գործում: Որևէ ներկայացուցիչ պատերազմի օրերին կամ հետո եղե՞լ է Արցախում սեփական աջակցություն, թե ինչ է կատարվում այստեղ:

- Եթե խոսքը վերաբերում է միջազգային կառավարական կազմակերպություններին, օրինակ, ՅՈՒՆԻՍԵՖ-ին, ապա որևէ ներկայացուցիչ չի այցելել Արցախ: Ավելին, իմ կողմից առնվազն երեք անգամ է ուղարկվել ՅՈՒՆԻՍԵՖ-ին, հիմնավորվել, որ ստեղծված հումանիտար ձգձգվածի պայմաններում երեխաների իրավունքների ապահովման համար Արցախը կարիք ունի միջազգային հանրության աջակցության: Որևէ արձագանք չի եղել: Առաջարկներ եղել են միջազգային ոչ կառավարական իրավապաշտպան կազմակերպություններից: Այսպես, «Փրկենք երեխաներին» կազմակերպությունը պատերազմի ավարտից հետո իր ներկայացուցիչներին ուղարկել էր: Համոզիչում ենք ունեցել նրանց հետ, ներկայացրել, թե ինչ խնդիրների են բախվում երեխաները: Կազմակերպությունը որոշ հումանիտար օժանդակություն ցուցաբերել է: Սակայն, ինչպես մնացած պարագաներում, այնպես էլ երեխաների պարագայում միջազգային հանրությունը կրավորական կեցվածք չի փոխում: Եվ մեր ամենակարևոր պահանջը միջազգային հանրությունից հետևյալն է, որ եթե չեն վստահում այն տեղեկություններին, որ տրամադրվում են Արցախի պետական կառույցների կողմից, ապա ուղարկեն իրենց անկախ փորձագետներին, որպեսզի տեղում զննահատեն իրավիճակը և

ըստ այդմ ներկայացնեն տեղեկություններ՝ իրենց կողմից ձեռնարկվելիք քայլերի համար: Անգամ այս պահանջը չի կատարվում: Միայն մասին բարձրաձայնել են նաև մի քանի օր առաջ, երբ ես և ՀՀ ՄԻՊ Արման Թաթոյանը հանդիպել ենք ԵՆԽԿԿ հատուկ զեկուցողի հետ: Ասել են, որ Արցախին արտաքին աշխարհից մեկուսացնելն էր պատճառը, որ միջազգային հանրությունը մինչև այսօր չի ընկալում արցախյան հիմնախնդրի էությունը, չեն տեսել, որ մեր պայքարը ոչ թե տարածքի համար է, այլ մեր կյանքի իրավունքի, որ պետություն չձանաչված լինելը չպիտի ազդեցություն ունենա մարդու իրավունքների վրա:

- Հետպատերազմյան ժամանակաշրջանում ևս երեխաների իրավունքները խախտվում են: Այսպես, շոշոփ դպրոցականը, մանկապարտեզի սանը շարքավա երեք օրերին որոշ ժամերի ստիպված է լինում բակ դուրս չգալ, քանի որ վտանգավոր է դպրոցի հարևանությամբ գտնվող մայրուղով անցնում է աղբեղանակալի ավտոշարայունը: Շոշոփ և հարևան Մխիթարաշենում գրեթե ամեն օր կրակոցների ձայներ են լսում: Դա ազդում է թե՛ երեխաների, թե՛ մեծերի վրա:

- Սա այն բարդ իրավիճակն է, երբ Արցախի պետական կառույցների լիազորություններով հարցերը կարգավորելը հեշտ չէ: Հենց հարցը բարձրացվել է, ես զննեցի եմ Շոշոփ երեխաները դպրոց կամ մանկապարտեզ հասնելու համար պետք է անցնեն այն ճանապարհը, որտեղով պարբերաբար իրականացվում է աղբեղանակալի մեքենաների տարանցումը: Պահանջել են, որ առնվազն դպրոցի ու մանկապարտեզի շրջակայքում գոնե դասերի ընթացքում վերակարգ սահմանվի՝ երեխաների անվտանգությունն ապահովելու նպատակով: Ոստիկաններն իրենց պարտականությունները կատարում են, մեկ է, դա անվտանգության լիակատար երաշխիք չէ: Սա ստեղծված այն իրավիճակն է, որում ապրում ենք:

Արդարադատության շարունակում է իր հանցավոր վարքագիծը, որի դրսևորումներից մեկը սահմանում օդ կրակելն է: Դրանով նպատակ է հետապնդվում հոգեբանական ճնշում գործադրել բնակչության վրա, որպեսզի մարդիկ ծառայադատ լինեն, բայց արցախյան կողմից հարցերի վրա: Շատ բարդ է աշխատել մի միջավայրում, երբ հաղորդակցությունը միակողմանի է, երբ դու անընդհատ խոսում ես, բարձրացնում ես հարցեր, սակայն լսող չկա:

- Մինչև պատերազմը երեխաների պաշտպանության ոլորտում ի՞նչ խնդիրներ գոյություն ունեին: Որևէ ուսումնասիրություն կատարվե՞լ է, չնայած պատերազմի պատճառով այնքան մարդ չի խնդիրներ են առաջացել, որ նախկինում եղածները ասես ստվերվել են:

- 2020 թվականի երկի մարտ-ապրիլ ամիսներին ՄԻՊ-ի և «Կոլդ փիժն Հայաստան» կազմակերպության միջև համագործակցության շրջանակներում նախաձեռնվել էր հետազոտություն Արցախի երեխաների իրավունքների ընդհանուր վիճակի վերաբերյալ: Ձեկույց պիտի հրապարակվեր սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսների ընթացքում, սակայն պատերազմական գործողությունների պատճառով հետաձգվել է: Որպեսզի զեկույցն առավել ընդգրկուն լիներ և արդիականությունը չկորցներ, ամհրաժեշտ էր ներառել նաև հետպատերազմյան խնդիրները: Նախատեսում ենք հունիսին հրապարակել:

Համառոտ ներկայացնեն, թե ինչ խնդիրներ ենք վերհանել: Արցախում պատշաճ ընտանիքավարությանն ու ծնողավարությանն

առնչվող խնդիրներով պայմանավորված՝ երբեմն խախտվում են երեխաների իրավունքները: Խոսքը, օրինակ, երեխաների նկատմամբ բռնության դեպքերի մասին է: Ըստ միջազգային վիճակագրության՝ աշխարհում յուրաքանչյուր չորրորդ երեխա ենթարկվում է բռնության: Արցախը բացառություն չէ, և պետության հիմնական գործառույթն այս առումով այն պիտի լինի, որ ծնողների հետ աշխատանք տարվի երեխաների դաստիարակության ճիշտ մեխանիզմների ներդրման ուղղությամբ: Բարձրացվել է, օրինակ, մանկապարտեզներում երեխաների բարձր խտության, տեղերի բացակայության հարցը: Նախադպրոցական տարիքի երեխաների ընդամենը 50 տոկոսն էր հաճախում մանկապարտեզ, ընդ որում, եթե քաղաքային բնակավայրերում այդ ցուցանիշը 60 տոկոսի էր հասնում, ապա գյուղական բնակավայրերում 32 տոկոսը չէր անցնում:

Մի խնդիր ևս: Ներառական կրթության կոնցեպտի էությունն այդպես էլ չի գիտակցվել, չի յուրացվել մեր կրթական համակարգի կողմից: Դա է պատճառը, որ շատերն այն համարում են պարզապես սահմանափակ կարողություններով երեխաների համար ներդրված համակարգ, բայց իրականում այդպես չէ: Ներառական կրթությունը ենթադրում է, որ յուրաքանչյուր երեխա ունենա իր կարիքինեղին ու պահանջներին համապատասխան կրթություն ստանալու իրավունք:

Անդրադառնամ հետպատերազմյան խնդիրներից մեկին միայն: Գիտեք, որ Հայրուքի դպրոցը տեղակայված է մայրաքաղաքի 3-րդ, Շուշիից՝ 2-րդ դպրոցում: Տեղահանված երեխաները դասի են գնում երկրորդ հերթով, անգամ տարրական օղակի աշակերտները: Այս հանգամանքը լուրջ հետևանքներ է առաջացնում երեխաների համար:

Երեխաների իրավունքների մասին հանրագրկուն զեկույցը հրապարակելուց հետո նաև լրատվամիջոցներին կներկայացնենք, կկազմակերպենք շնորհանդեսներ ըստ բնագավառների: Խնդիրները, դրանց հաղթահարման համար մեր առաջարկները ներկայացնելու ենք պետական մարմիններին: Հետևողական ենք լինելու, որ առաջարկները կյանքի կոչվեն, առնվազն քննարկումներ սկսվեն դրանց կյանքի կոչելու ուղղությամբ:

- Երեխաները կարիք ունեն պաշտպանվելու մեծերից: Ի՞նչ է արվում, որ նրանք ավելի հրազեկված լինեն իրենց իրավունքների մասին:

- Մինչպատերազմյան ժամանակաշրջանի մասին խոսեմ, քանի որ պատերազմից հետո առաջնահերթությունները փոխվել են: Մինչև պատերազմը իրազեկման արշավներ էին կազմակերպում դպրոցներում, երեխաներին պատմում էին իրենց իրավունքների մասին: Զրուցում էինք և մանկավարժների հետ: Միայն մեր աշխատակազմով դա իրականացնելը հնարավոր չէ, ուստի պարտադիր պետք է համագործակցենք ոլորտում գործունեություն ծավալող հասարակական կազմակերպությունների հետ: Պետք է աշխատենք նաև համապատասխան պետական կառույցների հետ, որպեսզի նախատեսվեն արտադասարանական միջոցառումներ, որոնց ընթացքում պարզաբանվեն երեխաների իրավունքները:

- Հունիսի 1-ը երեխաների տոնն է: Ի՞նչ կուզենայիք ասել մանկության մոլորակի բնակիչներին:

- Ծնորհավորում են աշխարհի բոլոր երեխաներին: Ամենամեծ ցանկությունս է, որ երկրագնդի որևէ ծայրում, որևէ անկյունում պատերազմ չտեսնեն, չհայտնվեն այնպիսի վիճակում, ինչպիսի վիճակում հայտնվել են մեր երեխաները 44-օրյա պատերազմի ընթացքում: Թող ունենան անհոգ, առողջ մանկություն, մեծաման ընտանիքում և հասնեն իրենց մեծ երազանքին:

ԳՈՐԾԸՆԹԱՑ

ԱՆՆՈՒԹԵՑ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ՝ ԶԻՇ ԺԱՄԱՆԱԿԻՆ

Հետպետերազմյան դժվարագույն հոգեկան ապրումները հաղթահարելու, բնականոն աշխատանքային առօրյան վերականգնելու համար հանրապետության աշխատանքային, այդ թվում և մանկավարժական կոլեկտիվները բարոյաև հոգեբանական, ինչու չէ, նաև մեթոդական օգնության խիստ կարիք ունեն։ Հենց այդ գիտակցումով էլ ԱՀ ԿԳՄՍ նախարարության կրթության պետական տեսչության հանձնաժողովը իրականացրեց մեթոդական օգնության կազմակերպում մեր՝ Եմիշմանի հիմնական դպրոցում։ Ստուգայցի հիմնական նպատակն էր ծանոթանալ ինչպես նախորդ ստուգումներից հետո անցած ժամանակահատվածում իրականացվող բարեփոխումների ընթացքին, այնպես էլ դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների ընդհանուր դրվածքին, մանկավարժական հանրույթի աշխատանքներում առկա բացթողումներին ու սխալներին։ Տնօրինությանը և ուսուցիչներին ցույց տալ հնարավոր մասնագիտական ու մեթոդական օգնություն, մշել ուղիները, որոնք կօգնեն վերացնելու մանկավարժական աշխատանքներում առկա թերություններն ու բացթողումները։ Տեսչական հանձնաժողովի առաքելության մեջ մտնում էր նաև կրթության զարգացման պետական ծրագրի իրականացման, պետական կրթական չափորոշիչների կիրառման, կրթության որակի բարձրացման, կրթական ծրագրերի իրականացման արդյունավետության գնահատման անհրաժեշտությունը։

Հանձնախմբի նախագահ Բեյբութ Մելքունյանի կողմից աշխատանքային օրակարգը ներկայացնելուց հետո ձևավորվեց շատ հաճելի մթնոլորտ։ Դա փոխադարձ հարգանքի, փոխադարձ վստահության, փոխըմբռնվածության մթնոլորտ էր։ Երկօրյա ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ դպրոցի տնօրենի և մանկավարժական հանրույթի կողմից բավարար աշխատանքներ են տարվում ուսումնադաստիարակչական գործընթացը բարձր մակարդակի հասցնելու համար։ Դպրոցավարման անհրաժեշտ փաստաթղթերը նորմալ վիճակում էին, որոշներն էլ թարմացման կարիք ունեն։ Բարվոք վիճակում էր նաև առարկայական երկու մեթոդիկականությունների աշխատանքային դրվածքը։

Բոլորն էլ լավ գիտեցին, որ ուսումնադաստիարակչական աշխատանքների որակի կայուն հիմքերը դրվում են տարրական դասարաններում։ Դա լավ են գիտակցում նաև դասավարդներ Լ. Սահակյանն ու Գ. Հակոբյանը։ Պատահական չէ, որ ուսուցչուհիները յուրաքանչյուր դասի նախապատրաստվում են պարտքի գիտակցումով ու բացառիկ եռանդով՝ օգտագործելով տարբեր ուղիներ, նյութեր, դիագրամներ, աղյուսակներ, թեմաներին առնչվող նկարներ, բառախաղեր, լրացուցիչ տեղեկություններ այլ աղբյուրներից։ Սրանք, բնականաբար, չվրիպեցին տեսուչ Ս. Հովսեփյանի տեսադաշտից, որը բարձր գնահատեց դասավարդների պատրաստվածության մակարդակը, նույնիսկ որոշ դրվագներ խրախուսելու առաջարկ արեց

(Լ.Սահակյանի մոտ դասախոսմանց հետո)։ Ուսուցիչներն էլ իրենց հերթին խոստովանեցին, որ բարձր գնահատականը բարձրացնում է նաև պատասխանատվության զգացումը։

Համակազմ դասարաններում երկու կամ երեք դասարանների ընդգրկմամբ դասավանդելը ոչ միայն լուրջ դժվարություններ է առաջացնում, այլև պահանջում է վարպետություն ուսումնական պրոցեսը արդյունավետ կազմակերպելու համար։ Առանց ստեղծագործական մոտեցման, դասավանդման ոչ ստանդարտ մեթոդների կիրառման դժվար կլինի ընկալել որակական արդյունքներ։ Հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Ս. Նասիբյանը հենց այս պատրաստվածությամբ է ամեն օր մտնում դասարան։ Դասապրոցեսին օգնում է նաև հմտորեն կահավորել լեզվի կաբինետը։ Կաբինետում առկա են և՛ լեզվին, և՛ գրականությանն առնչվող բազմաթիվ թեմատիկ նկարներ, աղյուսակներ, պատանուներ, շատ այլ նյութեր՝ աշակերտների ուժերով ստեղծված։ Եթե այս բոլորին ավելացնենք, որ ուսուցչուհին դասարան է մտնում բոլոր դասարանների համար թեմաների սեղմագրությամբ՝ տնային և դասարանական աշխատանքների երկուսով տեսրեր ունենալով։ Ուսուցչուհու մոտ լավ են ստացվում ինչպես միջառարկայական կապերը, այնպես էլ կապը արդիականության, բնության, անցած թեմաների (նաև՝ տարբեր դասարանների) հետ։ Տեսուչ Գ. Գալստյանը ուշադրություն դարձրեց նաև այն փաստի վրա, որ ուսուցչուհի Ս.Նասիբյանը բարեխղճորեն ու պատասխանատվությամբ է կատարում դասավանդողի իր առաքելությունը, շեշտեց նաև այն, որ ուսուցչուհին խստապահանջ է ինչպես իր նկատմամբ, այնպես էլ աշակերտների և ամեն ինչ անում է, որ նրանք ավելի ինքնուրույն լինեն, կարողանան ինքնադրսևորվել, հիմնավորված կարծիք հայտնեն այս կամ այն հարցի վերաբերյալ։ Այս հարցում աշակերտների լավագույն բարեկամը, պարզ է, գեղարվեստական գրքերն են, որ ուսուցչուհին հանձնարարում է կարդալ, որոնք վերաբերում են թեմաների բնագրերին՝ աշակերտներին համոզելով, որ գրքերի մեջ պետք է փնտրել լավ ու բարին, իրենց հուզող շատ հարցերի պատասխաններ հենց գրքերի մեջ են ամփոփված։ Դասախոսմանը պարզ դարձավ, որ դեռևս լուրջ աշխատանք պետք է տարվի բանավոր խոսքի զարգացման, դասերին բարբառային բառերի անհարկի օգտագործման, գրական հայերենով հաղորդակցվելու մշակույթի զարգացման վրա։

Դպրոցում առկա են նաև ռուսաց լեզվի, քիմիայի և կենսաբանության կաբինետներ։ Այս առարկաների դրվածքը բավականին բարձր հիմքերի վրա է։ Ուսուցչուհիներ Կ.Հայրապետյանը (ռ. լեզու) և Ա. Պողոսյանը բարեխղճորեն են նախապատրաստվում դասին և կարողանում են ապահովել աշակերտների ակտիվ մասնակցությունը դասագործընթացին։ Կաբինետում առկա դիդակտիկ նյութերը, դիտողական պարագաները մեծ մասամբ ինքնաշեն են՝ ստեղծված աշա-

կերտների մասնակցությամբ։ Նրանք իրենց ձեռքի տակ ունեն առարկաների թեմատիկ պլանավորում, դասերի սեղմագրում, գործնական աշխատանքների, փորձերի համար նախատեսված նյութեր։ Սակայն անհրաժեշտ նյութերի ու սարքավորումների սակավությունը հաճախ խոչընդոտում է առանձին թեմաներ մատչելի եղանակով ուսուցանելուն։ Տեսուչ Վ. Հայրիյանը համոզմունք հայտնեց, որ ուսուցչուհի Պողոսյանը ունակ է համակազմ դասարաններում ապահովել դասի ճիշտ կառուցվածքը, կենտրոնացնել աշակերտներին ուսուցանվող թեմայի վրա, ապահովել մասնակցություն դասապրոցեսին։ Իսկ դա ուսուցչուհու աշխատասիրության, գործին նվիրվածության արդյունք է։ Մխաված չեն լինի, եթե ասեն, որ շատ դպրոցներում կերպարվեստ, տեխնոլոգիա, երաժշտություն առարկաները (մասնագետ ուսուցիչներ չլինելու պատճառով) դիտվում են որպես երկրորդական առարկաներ և շատ դեպքերում լրացնում են թերթանաբեռնված ուսուցիչների պակասը։

Բայց տեսուչ Վ. Առաքելյանը միանգամայն գոհ մնաց երաժշտություն առարկայի դասավանդման դրվածքից։ Նա միաժամանակ գերազանցապես աշակերտների հայեցի կրթության ու դաստիարակության գործում կերպարվեստ, երաժշտություն առարկաների դերը և խրախուսեց ավելի մեծ ուշադրություն դարձնել խմբերգերի, ժողովրդական երգերի ուսուցմանը։ Առարկան դասավանդում է Լ.Սահակյանը։

Տեսչական խումբն առաջարկեց կատարելագործել ուսման մեթոդները, լույս ընծայել առարկայական բյուլետեններ, պատի թերթեր, մեծ ուշադրություն դարձնել ինքնակրթությանը, այն էլ՝ փաստաթղթային տարբերակով, աշակերտներին սովորեցնել օգտվել քարտեզներից, ատլասներից՝ վայրերի տեղագրությունը ճիշտ գտնելու համար։ Ֆիզկուլտուրայի, ՆԶՊ դասերին հասնել այն բանին, որ սովորողները տիրապետեն այն մակագույնին, որ կօգնի նրանց հետագայում գինծառայության ժամանակ։

Համոզված են, որ տեսուչների կողմից ցուցաբերված մասնագիտական և մեթոդական օգնությունը խթան կհանդիսանա դպրոցում ուսումնադաստիարակչական աշխատանքներն ավելի բարձր մակարդակի հասցնելու գործում։

Ողջունելի է, որ կյանքը երկրամասում մտնում է զարգացման բնականոն հունի մեջ, ինչը նոր լիցք կհաղորդի հանրապետության ողջ բնակչությանը, աշխատավորական կոլեկտիվներին։

Մեր դպրոցի մանկավարժական կոլեկտիվն ամեն ինչ կանի՝ ստուգումների ժամանակ ի հայտ եկած բացթողումներն ու թերությունները վերացնելու և նոր ուսումնական տարում եռանդով նվիրվելու հասարակության համար արժանավայել քաղաքացիներ դաստիարակելու ու կրթելու սրբազան գործին։

Լևոն ԱՌԱՔԵԼՅԱՆ
Գ. Եմիշման

Կլոր սեղան

ՊԱՏԵՐԱԶՄ. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐ



Մայիսի 21-ին ԱրՊՀ տնտեսագիտության ֆակուլտետի նախաձեռնությամբ կազմակերպվել է կլոր սեղան՝ «Պատերազմ. սոցիալ-տնտեսական հետևանքներ» թեմայով, որին ներկա էին ԱՀ արտաքին գործերի նախարար Դավիթ Բաբայանը, տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար Հայկ Խանունյանը, ԱԾՆ նախագահ Մանուչ Մինասյանը, ԱրՊՀ ռեկտոր Արմեն Սարգսյանը, դասախոսներ, ուսանողներ։

ԱրՊՀ ռեկտոր Արմեն Սարգսյանը, կարևորելով արդիական խնդիրների շուրջ կլոր սեղան-քննարկում կազմակերպելը, շնորհակալություն է հայտնել հյուրերին ու կազմակերպիչներին։

Նա ընդգծել է, որ մեծ ծախսեր լավագույն հարթակն է բուհարտաքին լսարան համագործակցության համար։

Տնտեսագիտության ֆակուլտետի դեկան, տ.գ.թ., դոցենտ Ռուզաննա Մանգասարյանի խոսքով՝ միջոցառման նպատակն է նպաստել ուսանողների ինքնուրույն հետազոտական կարողությունների, վերլուծական մտքի զարգացմանը, ուսումնասիրել և վեր հանել պատերազմի հետևանքով երկրում ստեղծված սոցիալ-տնտեսական խնդիրները և ուղենշել դրանց լուծումները։

Գիտական ընթերցումներով հանդես եկան «Ֆինանսներ» մասնագիտության ավարտական կուրսերի ուսանողներն ու մագիստրանտները։ Նրանք պայդների միջոցով ներկայացրել են կատարած ուսումնասիրությունների արդյունքները։

«Մեր ուսումնասիրության ընթացքում կատարել ենք ԱՀ-ում մարդկային զարգացման համաթվի հաշվարկ, նկատել ենք, որ պատերազմի հետևանքով մարդկային զարգացման համաթվի բաղադրիչները նվազման միտում են ցույց տվել», - ասաց «Ֆինանսներ» 4-րդ կուրսի ուսանողուհի Սարիա Մանուչարյանը։

«Կառավարում» 2-րդ կուրսի մագիստրանտ Դիանա Հարությունյանը նշեց, որ հետազոտության ընթացքում իրականացրել են սոցիալոգում, որին մասնակցել է շուրջ հարյուր բնակիչ։ Մասնակիցների 40%-ը եղել են 18-36 տարիքային խմբի բնակիչներ։ Սոցիալոգում արդյունքում պարզ է դարձել, որ ներկա պահին հարցվածների 44%-ը չունի աշխատանք, որից 20%-ը նշել է, որ դա պատերազմի հետևանք է։ Սոցիալոգում արդյունքում բնակիչները հանդես են եկել նաև առաջարկություններով, որոնցից էին նոր աշխատատեղերի բացումը, աշխատավարձերի բարձրացումը և դրամական աջակցությունների տրամադրումը կատարած որոշակի աշխատանքի դիմաց։

Հնչած խնդիրները լսել և դրանց շուրջ իրենց տեսակետներն են հայտնել ԱՀ ոլորտային գերատեսչությունների պատասխանատուները՝ ներկայացնելով պետության կողմից իրականացվող քաղաքականությունը երկրում առկա խնդիրների լուծման ուղղությամբ։

Քննարկումների ընթացքում հնչած հարցերի արդյունքում ակնհայտ դարձավ, որ առաջնային խնդիրներից է մարդկանց բնակարաններով ապահովելը, քանի որ տարիանվածները ստիպված են կամ վարձել տներ, կամ էլ ժամանակավոր տեղավորված են հյուրանոցներում ու կացարաններում։ Նրանցից շատերը չեն վերադարձել Արցախ հենց բնակարան և աշխատանք չունենալու պատճառով։

Բարձրացրած հարցերից էր նաև բնակչության անվտանգության ապահովումը։

Քննարկումներն ամփոփելով՝ ներկաները եկան այն եզրակացության, որ մասնատիպ հանդիպումները պետք է շարունակական լինեն, քանի որ երիտասարդությունը հասարակության կորիզն է, որն ակտիվորեն պետք է մասնակցի պետականաշինության և պետականապահպանման գործին։

Թամարա ՀԱՂԱԶԱՐՈՎԱ

ՎԵՐՋԻՆ ԶԱՆԳ

ՎՐԱԺԵՑ

Մեկ տարի առաջ պատերազմական իրավիճակի ու դրա հետևանքների կրողներ չէինք, բայց կար մի այլ իրողություն՝ համաշխարհային համավարակ, որով էլ պայմանավորված՝ մեր շրջանավարտներին չթույլատրվեց Վերջին զանգի լիարժեք հանդիսություն կազմակերպել: Այդուհանդերձ, Ասկերանի շրջանի Խնամապատի միջնակարգ դպրոցի 2019-2020 ուստարվա վեց շրջանավարտները (ավելին պիտի լինեին...), ամեն տեսակ շեղումներից զուրկ, մի համեստ իրաժեշտ կազմակերպեցին՝ առանց ծնողների, հարազատների ու մտերիների, որը, սակայն, պակաս ողբերգական չեշտեր չուներ, քան այս տարվա շրջանավարտներինը: Ավելին ասեն. այդ շրջանավարտներից երկուսը 2020թ. 44-օրյա պատերազմում կորցրին իրենց հարազատ եղբայրներին:

Ելույթը, որ չէի հրապարակել մեկ տարի առաջ, հարմար համարեցի հրապարակել մեկ տարի անց:

Թերևս 2019-2020 ուստարին էլ դպրոցականների կյանքում կառանձմանա իր յուրահատկություններով: Տարիներ անց շրջանավարտների հիշողության մեջ այս ուսումնականը չի փայլի իր պերճանքներով, հետաքրքրություններով ու երջանիկ ակնթարթներով: Նրանց հիշողության հորիզոնները չեն շառագունի արշալույսի բոսոր ու դեղձան երանգների ճաճանչներով, ուսումնական տարվա վերջին ամիսների միապաղաղ կյանքն էլ կսահմանափակի պատմությունները դպրոցական չարածիությունների մասին: Ինչ կլինի տարիներ անց՝ ժամանակը ցույց կտա: Ինչևէ:



Այսօր Խնամապատի Արթուր Գայրապետյանի անվան միջնակարգ դպրոցում շրջանավարտների Վերջին զանգի արարողությունն է՝ ձևական, խիստ սահմանափակ, առանց ընկերական ու բարեկամական լայն շրջանակի, անգամ առանց ծնողների, որոնք 12 երկար ու ծիգ տարիներ սպասել են այս օրվան, աչքալուսանքի ու բերկրանքի խոսքերի:

2008-2009 ուստարում Առաջին զանգի դրանքներով դպրոցի առաջին դասարան ութ դրեց 8 աղջնակ, որը հետագա բոլոր տարիներին պիտի կոչվեր օրհորդաց դասարան, իսկ դասավար Սուսաննա Ներսիսյանը՝ օրհորդաց դասարանի ղեկավար: Երջանիկ էր դասավարն իր ութ դասողներով, որոնք նկատմամբ նրա սերն անչափելի էր ու անսահման: Աձեցրեց նրանց ու հասցրեց 4-րդ դասարան... Մինչդեռ անգուր ճակատագիրը դաժան անակնկալ էր պահել նրանց համար: Ուսումնառության 4-րդ տարում կորցրին դասարանի աչքաբաց ու սիրված աշակերտուհուն՝ տասնամյա Մանանա Մոսյանին: Ամիսներ շարունակ նրա դպրոցա-

կան աթոռը դատարկ էր, սակայն դասավարը ծաղիկներով էր լրացնում սիրելի աշակերտուհու բացակայությունը. նրա նստարանին միշտ թարմ ծաղիկներ կային: Ընկերուհիների հիշողության մեջ Մանանան տարիներ շարունակ լուսավոր ու պայծառ աստղի պես ուղեկցում էր նրանց:

9-րդ դասարանն ավարտելուց հետո աղջիկներից մեկն էլ դուրս եկավ դպրոցից՝ արհեստ սովորելու նպատակով, և մնացին 6 հոգով: Միավոր 2017թ. հունիսին այս աշակերտներին պատուհասեց մի ուրիշ մեծ կորուստ. նրանք կորցրին իրենց առաջին ուսուցչուհուն՝ ընկեր Ներսիսյանին: Այսպես, հարված՝ հարվածի ետևից:

Թվում էր, թե գոնե դպրոցն ավարտելիս ամեն ինչ ավանդական հունով կընթանար: Սակայն այս անգամ էլ ճակատագիրն անողոր եղավ նրանց հանդեպ այլ առումով: Աշխարհին սպառնացող համավարակը աղարտեց օրհոր-

դաց դասարանի Վերջին զանգի հանդիսավոր արարողությունը, որն այնքան հաճելի ակնթարթներ ու բերկրանք պիտի պարզներ նրանց:

Այսօր, ահա, այս դասարանի աղջիկների Վերջին զանգի (եթե կարելի է այդպես անվանել) արարողությունն է: Շրջանավարտներն աշխատել են որոշակի բովանդակություն հաղորդել իրենց կյանքի այդ կարևոր իրադարձությանը ահա այսպես. դպրոցի բակի ծառուղում, տոնական սեղանն է՝ կենտրոնում տոնական տորթով՝ շրջանավարտների անուններով ու զգեստներին ներդաշնակված գույներով զարդարում: Նրանց հոգիներում, սակայն, ծանր թախիծ կա նստվածք տված: Մանանայի անունն են վանկարկում դողացող շուրթերով ու կոկորդ խեղդող հեծկտանքով: Մանանայի մայրիկը՝ տիկին Անուշն է փոխարինում դստերը՝ աչքերից հորդող արցունքների ու լուրջներն այտերին... Գնչուն է Քրիստինե Պեպելյանի տխրաթախիծ «Իմ ընկեր» երգը Լիլիանայի շուրթերով՝ նվիրված իրենց սիրելի ընկերուհուն:

Ես երգվում եմ քեզ, կպահեն արդար հիշատակդ վառ,



Չի լինի մի օր, որ հուշերը մեր մեզ դառնան օտար, Սուրբ անունը քո կպահեն հոգուս լույսերում արդար, Կարդեն հույսով երկնքում ննջող քո հոգու համար:

Դասղեկ Անահիտ Գասպարյանը իրաժեշտի իր խոսքում սաներին կանաչ ճանապարհ ու լուսավոր ապագա է մաղթում, երազանքների իրականացում: Դպրոցի տնօրեն Լյուդմիլա Մոսիյանը շնորհավորում է շրջանավարտներին դպրոցն ավարտելու և կյանք մտնելու կապակցությամբ: Խորհուրդ է տալիս չվախենալ դժվարություններից ու փորձություններից, կես ճանապարհից հետ չդառնալ, շարունակել շարժվել առաջ՝ սուրբ նպատակը ուղեկցող դարձրած:

Արարողությանը շատ էին տխուր ու թախծոտ վայրկյանները: Ի վերջո, օրվա խորհուրդը ցրեց տխրության շղարշը, բաժակներում փրփրեց հայկական շամպայնը... Բաժակներն իրար զարկվեցին, հորդեցին շնորհավորանքի խոսքերը: Դպրոցական կյանքի վերջին, եզրափակիչ օր, որ միշտ վառ է մնալու կյանքի հետագա բոլոր փուլերում:

Շրջանավարտներն անկեղծանուն ու շնորհակալության, երախտագիտության խոսքեր են հնչեցնում մանկավարժների հասցեին, որոնք իրենց կրթել են ու դաստիարակել և հասուն մարդիկ դարձրել:

Ահա այսպիսի են շրջանակում, առանց երկար-բարակ ավելորդությունների, շրջանավարտները՝ օրհորդաց դասարանը, իրաժեշտ է տալիս հարազատ կրթօջախին ու դասղեկի հետ ճանապարհվում՝ և մի սուրբ պարտականություն կատարելու. նրանք գերեզմաններ են այցելում, որպեսզի ծաղիկներ խոնարհեն Արցախյան գոյամարտի նահատակների ու իրենց առաջին ուսուցչուհու շիրմներին: Բարի ճանապարհ ձեզ, սիրելի շրջանավարտներ: Այն բոլոր կորուստներն ու զրկանքները, որ բախտը մատուցել է ձեզ, թող հիշողություն դառնան, և կյանքը նոր գույներով, երջանիկ ակնթարթներով զարդարի ձեր ապագա ճանապարհը:

Թող մեր իրականությունը գերծ լինի բոլոր տեսակի տհաճ երևույթներից, և աշխարհում տիրի այնքան ցանկալի ու բաղձալի հոգեկան անդորրը, որի կարիքը տեսչուն ենք բոլորս: Լուսահորդ ու պայծառ օրեր՝ ձեր երազանքների իրականացման ճանապարհին:

Սուրյա ԴԱԶԱՐՅԱՆ

ԲԱՑ ԴԱՍ ՄԱՆԿԱՊԱՐՏԵՂՈՒՄ

Մայիսի 24-ին Մարտունու հ. 1 մանկապարտեզում կազմակերպվեց գրաճանաչությունից բաց դաս: Ներկա էին շրջվարչակազմի ղեկավարի տեղակալ Վ. Դանիելյանը, ԿՍ բաժնի վարիչ Մ. Ջիվանյանը, քաղաքապետի պաշտոնակատար Ա.Սալյանը, ԿՍ բաժնի մասնագետ Ա. Գոլսեփյանը, Սոսի, Գիշու մանկապարտեզների և Խնուշինակի միջնակարգ դպրոցին կից նախադպրոցական խմբի դաստիարակներ:



Բաց դասը կազմակերպվել է ավագ խմբում, ուր հաճախում է 32 երեխա: «Տարվա լավագույն դաստիարակ» կոչմանն արժանացած Գ. Գայրուսյանը ունի երկար տարիների մանկավարժական փորձ: Միշտ առանձին հոգատարությամբ է շրջատել փոքրիկներին, կրթել ու դաստիարակել՝ մնալով կյանքի համար լավագույն օրինակ, ծնողների համար՝ սիրելի անձնավորություն:

Գրապատմությունը երեխաների ակտիվությունը հուշեց, որ դաստիարակը սիստեմատիկաբար է աշխատում, խոսում է մաքուր հայերեն:

Երեխաները գիտեն հայերենի բոլոր տառերը, կարողացան նկարի շուրջ ստեղծել պատմություն, վանկատել բառերը, տարբերել բաղաձայն և ձայնավոր հնչյունները, թվարկեցին գրողների անունները, գիտեն հեքիաթներ: Կազմակերպվեցին խաղեր՝ խաղանիշերով: Գրատախտակի մոտ երեխաները կազմեցին բառեր: Վերջում կարտիվեց գործնական աշխատանք: Նվիրված աշխատանքի հետ



մեկտեղ Գայանե Գայրուսյանը իր ամուսնու՝ գնդապետ Գուրան Գայրուսյանի հետ ստեղծել է հիմնալի ընտանիք: Չորս երեխաների (երեք աղջիկ և մեկ տղա) մայրը մեծ հոգատարությամբ իր ուսերին է առել նրանց դաստիարակությունը, քանի որ երեխաների հայրը ամբողջ ժամանակ ծառայության մեջ է:

Դաստիարակի աշխատանքն ապացուցեց, որ աճող մատաղ սերունդը հուսալի ձեռքերում է:

Անուշ ԳՈՎՍԵՓՅԱՆ
Մարտունու շրջվարչակազմի ԿՍ բաժնի մասնագետ

ԱՇԽԱՐՀԱՔԱՐԱՔԱԿԱՆ

ԲԱՅ ՆԱՄԱԿ ՄԱԿ-Ի ՂԵՒՆՎՈՐ ԶԱՐՏՈՒՂԱՐ ՊԱՐՈՆ ԱՆՏՈՆԻՈ ՊՈՒՏԵՐԵՄԻՆ, ՌԴ ՆԱԽԱԳԱԶ ՎԼ. ՊՈՒՏԻՆԻՆ ԵՎ ԱՄՆ ՆԱԽԱԳԱԶ ՋՈ ԲԱՅՂԵՆԻՆ

Մեծարգո՝ պարոնայք, Ձեզ է դիմում Երկիր մոլորակի 92-ամյա հասարակ մի բնակիչ՝ արցախայի ծերունի:

Հարգելի՛ պարոն Գուտերես, 1991թ. աշխարհի պետությունների շարքը լրացրել են ԽՍՀՄ-ի փլուզումից ծնված երկու պետություն՝ ԼՂ Հանրապետությունը և Ադրբեջանի Հանրապետությունը: Չգիտեմ ինչու, երբ Ադրբեջանը դիմել է ՄԱԿ-ին անդամակցելու, հարգվել է նրա դիմումը, իսկ ԼՂՀ-ն, որ 1992թ. հունվարի 6-ին իր օրենսդիր մարմնի անունից, ելնելով ժողովուրդների ինքնորոշման անբախտելի իրավունքից և հիմնվելով համարաբար միջոցով ԼՂ ժողովրդի ազատ կամքի արտահայտության վրա, ընդունել է ԼՂՀ պետության անկախության մասին հռչակագիր և նույն օրը դիմել ՄԱԿ-ին ու աշխարհի բոլոր պետություններին՝ խնդրելով ճանաչել ԼՂՀ-ն և օգնել կանխելու Արցախի հայերի ցեղասպանությունը, անպատասխան է մնացել: Ադրբեջանը, ընդունվելով ՄԱԿ-ի անդամ, իր զինված ուժերի զինամուտը համարել է իր տարածքում գտնվող Ադրբեջանի զինվորական օկուպացիայի նախնական խորհրդային բանակի պահեստների հաշվին, որոնք զավթվեցին նրա կողմից: Այդ պահեստներում պահվում էր 11 հազար վազոն զինամթերք, որը, ըստ զինվորական փորձագետների հավաստման, կբավականացներ մեկ տարի շարունակ ակտիվ ռազմական գործողություններ իրականացնելու համար: Եվ Ձեր թույլտվությամբ նա պատերազմ սկսեց մեր փոքրիկ պետության դեմ, իսկ մենք, զինված լինելով որսորդական հրազաններով, կարողացանք պաշտպանվել և նույնիսկ հաղթել մինչև ատամները զինված ուսիսին, քանի որ այն ժամանակ Ադրբեջանը մեն-մենակ էր կռվում մեր դեմ:

Արցախը հաղթեց նաև 2016թ. քառօրյա պատերազմում, բայց քանի որ բուրքի ծեռքը ոչ ոք չբռնեց, Ադրբեջանը նրա անմիջական մասնակցությամբ 2020թ. սեպտեմբերի 27-ին նոր պատերազմ սկսեց Լեռնային Ղարաբաղի դեմ, որը պատերազմի նման չէր, այլ հայերի ցեղասպանության, երիտասարդների մահադաշին: Այո, իսկական մահադաշին: Ադրբեջանցի ասկարը ոչ թե կռվում էր հակառակորդի դեմ, այլ հայի դեմ, նրա նպատակը հայի ոչնչացումն էր, և մարտում զոհվածների նկատմամբ ամեն մի վայրագության էր դիմում, որը հարիր չէ մարդուն: Եվ ահա, 44-օրյա պատերազմում, աշխարհի և Ձեր աչքի առաջ հռչակեցին և հողին հավասարեցրին մեր ծաղկուն երկիրը: 100 հազար մարդ փախստական դարձավ, որոնց բնակարանները դարձան ազերիների օկուպացիաներ, որոնք այսօր խժռում են մեր ժողովրդի քրտինքով ստեղծածը: Ահա թե ինչու եմ իմ բողոքը հայտնում այս նամակով Ձերը մեծություններին, թե ինչու Դուք, որպես աշխարհի երեք հսկաներ, չեք կարողացել և չեք կարողանում բռնել ագրեսորների ծեռքը և համապատասխան պատիժ տալ:

Պարոն Գուտերես, ես այս հասակում 5 պատերազմների ակնատեսն եմ եղել: Առաջինը 2-րդ համաշխարհային պատերազմն էր: Երբ սկսվեց, 12 տարեկան անհոգ մանուկ էի, աշխարհի մանուկներից մեկը: Մանկությունս խորտակվեց, ժամանակացի շուտ մեծացա, գութանի մաժ բռնեցի, հունձ արեցի, պատերազմի հետևանքով հայրս ու քեռիս զոհվեցին, 2 եղբայրս ու 2 քույրս սովից ու հիվանդություններից տառապելով՝ մահացան: Պատերազմի վերջին օրերին գլխիս ճերմակ մազեր երևացին: Երկրորդ պատերազմը 1992-94թթ. Ադրբեջանա-ղարաբաղյան պատերազմն էր, որի ժամանակ 1992թ. օգոստոսի 16-ին Ադրբեջանի «Գրադ» կայանքից խփած համազարկով ավերվեց սեփական տունս, և վիրավորվեցին ավագ դուստրս ու երկու տարեկան թոռնուհիս: Վերջին՝ 5-րդ պատերազմը 2020թ. սեպտեմբերի 27-ին սկսված 44-օրյա պատերազմն էր, որի ժամանակ այն երկու տարեկան թոռնուհիս, որը մեծացել է բնակվում էր Շուշիում, տուն-տեղ թողած՝ ծոռնուհուս հետ փախստական դարձավ և այսօր, անտուն մնացած՝ մի կերպ գոյությունը պահում է: Ել չեմ ասում, որ Շուշիում են մնացել միջնեկ աղջկան և նրա աղջիկների բնակարաններն ու ունեցվածքը:

Պարոն Գուտերես, ես 16 տարեկան էի, երբ 1945թ. հոկտեմբերին ծնվեց այսօր Ձեր կողմից ղեկավարվող ՄԱԿ-ը, որի հետ մարդկությունը մեծ հույսեր էր կապել, քանի որ հենց այդ օրերին, երբ ԽՍՀՄ-ի, ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի և Չինաստանի ներկայացուցիչները Վաշինգտոնի Դամբաբերոն օուլս առանձնատանը բնարկում էին ՄԱԿ-ի կանոնադրությունը, այդ 4-ից մեկը բացական էր սաաց, որ դա բոլոր դժբախտությունների գալիք համադարձան կլինի: Ես այն ժամանակ չէի հասկանում «համադարձան» հասկացությունը: Երբ մեծացա, ուսուցիչ դարձա, «Մարդու իրավունք» առարկան դասավանդելիս բոլոր աշակերտների տետրերի առաջին էջում խոշոր տառերով գրել տվեցի. «ՄԱԿ-ը բոլոր դժբախտությունների համադարձանն է»: Եվ ուղիղ 60 տարի այդ չափորոշիչով եմ դաստիարակել սաներիս: Ես նպատակ ունեի հեռագրով շնորհավորել ՄԱԿ-ի ծննդյան 75-ամյակը և խնդրել, որ 21-րդ դարը խաղաղության դար հայտարարվի, բայց 44-օրյա պատերազմը խանգարեց, և այսօր էլ խնդրում եմ, որ 21-րդ դարը հայտարարվի խաղաղության դար: Զե՛ք որ ՄԱԿ-ի հիմնական նպատակը միջազգային խաղաղություն պահպանելն է, որը նրա չորս նպատակներից ամենազխավորն է, քանի որ խաղաղությունն է բոլոր բարիքների և հաջողությունների բանալին: Գիշտ է, ՄԱԿ-ը իր ծավալում կառուցվածքով ու մեծ հնարավորություններով հանդերձ ի վիճակի չեղավ աշխարհի խաղաղության պահպանող դառնալ, լուծել երկրների միջև անհամաձայնությունները և կանխել եղած պատերազմները: Զկարողացավ նույնպես կանխարգելել մարդու իրավունքների սոսկալի խախտումները, քաղաքական, ցեղային կամ կրոնական փոքրամասնությունների դեմ կատարվող բռնությունները և այլն: Բայց որ նոր համաշխարհային պատերազմ չբռնկվեց, չնայած 75 տարվա ընթացքում 200-ից ավելի պատերազմ է եղել, այդ թվում՝ այս վերջին 44-օրյա պատերազմ-ցեղասպանությունը, համոզված եմ, որ նոր համաշխարհային պատերազմ չի բռնկվել ՄԱԿ-ի ջանքերի շնորհիվ է նաև: Քանի որ աշխարհում այնքան զենք է կուտակվել, որ եթե բռնկվի նոր համաշխարհային պատերազմ, ապա 4-րդը մարդկությունը նետ ու աղետով կդիմավորի:

Պարոն Գուտերես, իմ աչքի առաջ աշխարհը շատ է փոխվել, արմատապես է փոխվել. եթե 1945թ. 4 պետություն էր ՄԱԿ-ի կանոնադրությունը բնարկում, ապա այսօր ՄԱԿ-ը ունի 193 անդամ պետություն, եթե այն ժամանակ առումային զենք ուներ միայն մեկ երկիր, ապա այսօր՝ 10-ից ավելին: Այն ժամանակ աշխարհում ապրում էր 2,5 մլրդ մարդ, այսօր՝ 7,8 մլրդ: Այն ժամանակ մահմեդականները 300 մլն էին, այսօր՝ 1,9 մլրդ կամ բնակչության 24,5 %-ը:

Պարոն Գուտերես, 20-րդ դարը մարդկությանը իր ահավոր թվաբանությունը տվեց՝ մարդկային կյանքը հաշվել միլիոններով, ռազմածակատներում զոհվածների և գերիների թվերը հաշվել միլիոններով, ռազմական ծախսերը հաշվել տրիլիոններով և այլն: 21-րդ դարը այլ թվաբանություն սովորեցրեց, այն թևակոխեց ոչ սահուն կերպով, այլ անվերջանալի ճգնաժամերի սպառնալիքի, համաճարակների, հարուստ ու աղքատ երկրների միջև փոխադարձ անվստահության, մարդկանց վիթխարի զանգվածների շրջանում անհազնացող հոռետեսության, ապաքայի անորոշության հանդեպ նրանց սարսափելի, ողջ քաղաքակրթության գոյության հնարավորության համար տագնապալի պայմաններով: Միևնույն ժամանակ կորոնավիրուսի համաճարակը խլելով միլիոնավոր կյանքեր և ամբողջ աշխարհն իր գիրկն առնելով՝ փրկեց մարդկությանը վերջնական կործանումից, բացեց նրանց աչքերը ու արթնացրեց խիղճը: Համաշխարհային այս ճգնաժամը եկավ սաստելու, պահանջելու, հասկացնելու, բացակայեցնելու, որ մարդկությունը կշարունակի բնության կողմից պատժվել, քանի որ վայր չի դրել զենքն և, իմ կարծիքով, մենք այս ամենը կհաղթահարենք մեր միասնությամբ ու համերաշխությամբ՝ աշխարհի երեսից ի չիք անե-

լով պատերազմները: 21-րդ դարը հայտարարելով խաղաղության դար՝ թեկուզ երկու փուլով, առաջինը՝ «Առանց պատերազմի դիմադրություն ՄԱԿ-ի ծննդյան 100-ամյակը» և երկրորդ փուլը՝ «խաղաղությամբ ավարտենք 21-րդ դարը» նշանաբանով:

Պարոն Գուտերես, երբ բռնկվեց կորոնավիրուսի համավարակը, Դուք անչափ անհանգստացած էիք և կոչ արեցիք, որ խստորեն պահպանվի զինադադարի ռեժիմը, առիթը չօգտագործել և սրացում թույլ չտալ: Ջարմանալիս այն էր, որ այդ օրերին Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը զանգեց Ձեզ՝ ասելով, որ ինքը անհանգստացած է կորոնավիրուսի համավարակով և խնդրում էր նրա առաջն առնելու նպատակով հրավիրել ՄԱԿ-ի արտահերթ համաժողով ու քննարկել հարցը, մինչդեռ մի քանի օր անց, 2020թ. հուլիսի 12-ին շրջանցելով Ձեր կոչը, հարձակվեց Հայաստանի վրա և 3-օրյա պատերազմով վնաս հասցրեց խաղաղ բնակչությանը՝ չպատժվելով ոչ Ձեր, ոչ աշխարհի հանրության կողմից: Նույն թվականի սեպտեմբերի 27-ին թուրքիայի և այլ երկրների մասնակցությամբ նա լայնածավալ պատերազմ սկսեց փոքրիկ Ղարաբաղի Հանրապետության դեմ՝ օգտագործելով արգելված և չարգելված զենքեր, 44 օրվա ընթացքում հռչակեց, հողին հավասարեցրեց այդ ծաղկուն երկիրը, 100 հազարից ավելի փախստականներ լիքը տուն ու տեղ թողեցին թշնամու տիրապետության տակ: Դա պատերազմ չէր, այլ հայոց ցեղասպանություն, քանի որ Ալիևը նպատակ էր դրել ոչնչացնել հայ զոհը և բացե՛րհաց այդպես էլ հայտարարում էր: Գիշտ է, Առաստանի միջնորդությամբ Ույեթների 9-ին կանգնեցվեց այդ մատաղաքը, որ կուլ տվեց հազարավոր երիտասարդների կյանք, բայց ՄԱԿ-ը, որի անդամն են 2 ագրեսոր պետությունները՝ Թուրքիան և Ադրբեջանը, նրանց հարցը չքննարկեց և համապատասխան պատիժ չտվեց: Ու այսօր էլ Ալիևը բռունցք է ճոճում՝ դարձյալ զոչելով, որ ոչնչացնելու է հայերին և այդ դարձրել է պետական քաղաքականություն: Ազգերի լիգան, որ ՄԱԿ-ից թույլ էր, համարձակություն է ունեցել իր շարքերից հեռացնել այնպիսի հզոր երկիր, ինչպիսին է ԽՍՀՄ-ը, իսկ ՄԱԿ-ը, որի աչքի առաջ Ադրբեջանը Թուրքիայի հետ միասին պատերազմով է հարց լուծում, նաև ինչպես Գիտերը երկրորդ աշխարհամարտի նախօրյակին պատերազմի օջախ էր կազմել, այնպես էլ այս երկու պետություններն են նոր պատերազմի օջախ կազմել բոլորի աչքի առաջ, և ամեն օր սուր ճոճելով՝ ավելի են համալրում իրենց Ձև՝ զինանոցը, միավորում զինուժը, ավելի սրացնում իրավիճակը:

Ես փոքր մարդ եմ Ձեզ խորհուրդ տալու հարցում: Պատերազմի դեմ պետք է պայքարել մինչև նրա սկսվելը, պետք է հարյուրապատկերել, ոչ թե տասնապատկերել ջանքերը խաղաղությանը սպառնացող երկրներին հայտնաբերելու համար և դրանց սանձերը քաշել, որովհետև գլխավորը պատերազմի օջախները հայտնաբերելն է ու դրանց վերացումը: Կրկնում եմ, այսօր բոլորի աչքի առաջ Թուրքիան և Ադրբեջանը ձևավորել են պատերազմի նոր օջախ և քանի գնում, այնքան անվախ են իրենց ձևացնում՝ արհամարհելով համաշխարհային հանրության և ՄԱԿ-ի կարծիքը: Նրանց զսպող չկա, իսկ հետո ուշ կլինի և, ընդհանրապես, պարոն Գուտերես, շատ անհանգստացած եմ, որ այսօր համաշխարհային ռազմական ծախսերը քանի գնում, շատանում են: 2019թ. դրանք կազմել են 1,9 տրիլիոն դոլար, այն դեպքում, երբ Առաջին աշխարհամարտը նստել է ընդամենը 800 միլիոն դոլար, իսկ 1772-1913 թթ. բոլոր պատերազմների ծախսերը միասին կազմել են 6 միլիարդ դոլար: Մի պահ կողքից մայե՛լ եք, թե ինչպես բնության կողմից վրանագր թողած, որոշ պետություններ իրենց ջանքերը, փողերն ու միջոցներն ուղղել են մեկ նպատակի. թե ինչպես վարպետորեն բնաջնջեն միմյանց: Իրոք, տխուր է, չէ՞: Նորից եմ խնդրում՝ կորեցից պատերազմը հրահրողների ձեռքերը, նրանց միջազգային դատարանի միջոցով բանտարկեք, հոգեբուժարանում բուժեք, այն-

պես, ինչպես նոր հաստատությունում եթե մեկը մեկին ծեծեր, որպես պատիժ ծեծողին պիտի տանեին հիվանդանոց՝ բուժելու: Կրկնում եմ, այսօր ՄԱԿ-ը, իրեն նորացնելով, կարող է ուժ գտնել գոնե 21-րդ դարը խաղաղության դար դարձնելու: Մեղք է մարդը՝ բնության գարդը, այսօր ինչո՞ւ ինձ նման զառանյալ ծերունին պատերազմի աչքերը տեսնելով, ավելի է ծերանում և տանջվելով գնում դեպի մահ:

Երկրագնդի թիվ մեկ մարդը Դուք եք և նա, ով Ձեզ կփոխարինի: Դուք Ձեր միսիան կատարեք, դարը խաղաղության դար հայտարարեցեք, թող պետությունները ձեռնպահ մնան սպառնալիքներից միջազգային և բնակչության բարեկեցիկ կյանքով զբաղվեն: Պարոն Գուտերես, Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին և նրանից հետո ՄԱԿ-ի անմիջական օգնությամբ կործանվեց միջազգային համակարգը, որը նաև միջազգային իրադրության փոփոխության հետևանք էր: Փոփոխությունը մարդկանց մտածողության և հոգեբանության մեջ, երբ անոթալի էր համարվում մեկ ազգի կամ ժողովրդի տիրապետությունը մեկ այլ ազգի կամ ժողովրդի վրա, չգիտես ինչու, 21-րդ դարում աշխարհի մեծ-մեծ աչքերի առաջ ալիկյան կլանը որոշել է ինչ գնով էլ լինի, իրենից ավելի զարգացած, ավելի ժողովրդավարական, ավելի հումանիստական պետությանը՝ հանձնել Արցախի Հանրապետության, կամ իրեն ենթարկել, գաղութացնել, կամ լրիվ ոչնչացնել: Մի՞թե դա մարդկային է: Կրկնում եմ, պետք է լուրջ միջոցներ ձեռնարկել: Հետո ուշ կլինի...

Այսօր մենք մեր մանկապարտեզի երեխաներին սովորեցնում ենք արտասանել.

«Աշխարհի ժիր մանուկներ, եկեք կանչենք ամեն տեղ. Թող միշտ լռեն զենքերը, Ուրախ ինչն երգերը»:

Իսկ Ադրբեջանի իշխանությունը սուր ճոճելով զոչում է, որ Հայաստան ամուսնով պետություն չպիտի լինի: Հայ անունը պետք է ջնջվի, իսկ երեխաներին էլ մանկապարտեզից սկսած սովորեցնում են.

«Աշխարհի թուրքալեզու երկրներ, միացեք,

Հայերին ոչնչացրեք և դեպի Թուրան ճամփա բացեք»:

Այն հայերին, որ տարածված են աշխարհով մեկ և որ երկրում հանգրվան են գտել, ծաղկեցրել ու զարգացրել են այդ երկրի մշակույթը, գիտությունը, տնտեսությունը, նպաստել նրա հզորացմանը: Բերում են միայն երկու օրինակ, որ հայ գիտնականները Առաստանը և ԱՄՆ-ը դարձրել են միջուկային գերտերություններ:

Եթե ՄԱԿ-ի ծննդյան տարում միայն մի երկիր ուներ ատոմային ռումբ, այսօր ավելի քան 10 երկիր, որոնց գլխավորում են ԱՄՆ-ը և ՌԴ-ն: Որպես հայ ծերունի, հպարտությամբ կասեմ, որ այս երկու երկրները, որոնք ղեկավարվում են մեծարգո պարոններ Ջո Բայդենի և Վլ. Պուտինի կողմից, հայ գիտնականների շնորհիվ են դարձել միջուկային գերտերություններ:

Բերեմ իրական փաստեր. պարոն Ջո Բայդեն. Ձեր երկրի ատոմային ռումբի հումքի ստեղծողներից մեկը հայ էր՝ Հենրի Կարպատյան, Ձեր արբանյակների կցման գլխավոր կոնստրուկտորը հայ էր՝ Արո Ավագյան, Ձեր տիեզերագնացներից մեկը հայ է՝ Ջեյմս Բադլան, որը երկու անգամ եղել է տիեզերքում, իսկ որ հայ համընթաց հրաշքեր է գործել, հիշեցնեմ, դա Ջորջ (Գևորգ) Ատոմյանն էր, որ ֆիզիկայի և զինաստեղծման բնագավառում ճանաչված դեմք էր աշխարհում, որի անվան հետ ուղղակի հրաշքեր են կապված: Թերթերում ընթերցել եմ, որ 1993-1994թթ. մինչև Ադրբեջանի հետ զինադադարի կնքումը ադրբեջանական 58 ռազմական ինքնաթիռներ են շարժվում Ղարաբաղի վրա, նրանց ջախջախիչ մեծամասնությունը անհետանում է Ջ. Ատոմյանի նոր գյուտի շնորհիվ: Նա ծառայել է ամերիկյան բանակում, որի ընթացքում և նրանից հետո գիտական մեծ սխրագործություններ է կատարել: Նա դարձել է Ջորջիայի Ասահազի համալսարանի Դավիթ

ՊԱՏՈՒԹՅԱՆ ԷՋԵՐ

ԻՆՉՊԵՍ ԵՆ 1919 ԹՎԱԿԱՆԻՆ ԱՂՐԵՋԱՆՑԻՆԵՐԸ ՓՈՐՁՈՒՄ ԶԱՆԳԵԶՈՒՐԸ ԲՈՆԱԿՑԵԼ ԱՂՐԵՋԱՆԻՆ

1919 թվականի օգոստոսի 22-ի համաձայնությամբ Արցախը ժամանակավորապես դարձավ Աղբյուրի մաս: Աղբյուրի գործիչները շտապում էին ամեն ինչ անել, որպեսզի Արցախը դարձնեին Աղբյուրի մշտական մաս: Հասկանալի էր, որ Արցախը Աղբյուրի կցելուց հետո հաջորդ փուլով ամեն ինչ արվելու էր, որպեսզի Ջանգեզուրը և կցվի Աղբյուրին: Այդպես էլ եղավ, քանի որ Արցախի հարցը լուծելուց հետո Աղբյուրի սպայական կազմն ու Արցախի ընդհանուր նահանգապետ Սուլթանովը սկսեցին գործի անցնել, որպեսզի Ջանգեզուրի հարցը ևս լուծվի:

Մասնավորապես, Սիմոն Վրացյանն իր «Հայաստանի Հանրապետություն» գրքում մի բացառիկ նամակ է հիշատակում, որտեղ երևում է թուրք-աղբյուրյանական ձեռագիրն ու նախագծերը՝ կապված Ջանգեզուրի հետ: Վրացյանը ծանոթագրություններում նշում է, որ գլուխը կազմելիս օգտվել է թիֆլիսյան մեկ աղբյուրից, ինչպես նաև զանգեզուրցի մտերիմ գործիչ Հ. Տերունու «Կառավարական օրգանները Ջանգեզուրում» ձեռագիր աշխատությունից: Վրացյանը օգտվել է նաև Հայաստանի Հանրապետության պատվիրակության դիվանի նյութերից: 1919 թվականի փետրվարի 7-ին Աղբյուրի սպայակազմի պետը իր գաղտնի մտքերն էր թելադրում Սուլթանովին:

«Ղարաբաղի հարցի խաղաղ կարգադրությունը հարկադրում է մտածել, որ Ջանգեզուրի գավառի կցումը տեղի կունենա առանց զին-

ված կռվի, որովհետև նրա հայ ազգաբնակչությունը, Նախիջևանի փլուզումից հետո, դրված է երկու կրակի մեջ և հազիվ թե համարձակվի դիմադրելու մեզ, առանց թիկունքում նախկին աջակցությունն ունենալու: Սակայն և այնպես, Ղարաբաղի անդորրության ապահովումը

հետ հայերը չեն կարող հաշտվել, և անկասկած, կաշխատեն օգտագործել ամեն հարմար առիթ կորուստը հետ դարձնելու նպատակով: Այդ բոլորը մեզանից կպահանջե, գործարարի դեպքում, գործեր թողնել համբերությամբ, իսկ ապագայում նաև Գորիսում՝ հայերի վրա հսկելու հա-

Այդ նպատակով հարկավոր է օգտագործել քրդական հիանալի մարտական ուժը, կազմակերպել նրանց հետևակ ու ծիավոր մասեր «համիրի» գնդերի օրինակով, որոնց գործնական օգտակարությունը փորձված է թուրքերի կողմից վերջին պատերազմի ընթացքում: Քրդական գնդերի անվտանգ գործունեության մասին փորձարարական, պարսկական և Միջագետքի ռազմա-ճակատներում՝ միաձայն խոսում են պատերազմի բոլոր մասնակցողները:

Քուրդ զորամասերի խաղաղ ժամանակի շարք ստեղծելու համար ենթադրվում է կազմակերպել քրդական ծիավոր գունդ և մի հրացանաձիգ գունդ: Քուրդ զորամասերի խաղաղ ժամանակ կվերածվի 4 գունդարտակի: Ձիմապարտ տարիքի քրդերը զինվորական պարտականություն կկատարեն իրենց մասերում, իսկ պատերազմի դեպքում կկազմվեն մոր մասեր էլ (երկրորդ և երրորդ հերթի գնդեր ու գունդարտակներ), որոնց մի մասը կհատկացվի ռազմա-ճակատին, մյուսները կմնան Ղարաբաղում:

Քրդական զորամասերի կազմակերպությունը հանգամանորեն մշակելու համար անհրաժեշտ է առայժմ պարզել, թե որքան հետևակ ու ծիավոր մարտիկներ կարող են տալ քրդերը: Հաղորդելով ձեզ այս մասին՝ խնդրում են ձեր գերագնացության հայտնել ձեր կարծիքը և հարողով խնդրված թվերը»: (Հատվածը վերցված է Սիմոն Վրացյանի «Հայաստանի Հանրապետություն»

գրքից: Երևան, 1993 թվական, էջ 344-345):

Այս բացառիկ նամակ-նախագիծն արդեն իսկ ցույց էր տալիս, որ Աղբյուրի նպատակն է Ջանգեզուրը բռնակցել, որից հետո Սամուր գետից մինչև Արաքս գետ կհաստատվեր իրենց իշխանությունը: Աղբյուրից հեռու այդ ամենը ցանկանում էին անել խաղաղ ճանապարհով, և հետագայում արդեն կտեսնենք, որ զանգեզուրցիներին փորձում էին բերել Արցախի օրինակը, որ պետք է բռնակցումը կատարվի խաղաղ ճանապարհով:

Քանի որ նրանք լավ հասկանում էին, որ զինված ճանապարհով Ջանգեզուրի կցումը կարող է չստացվել: Հետաքրքրական է, որ այդ շրջանում հայկական քաղաքական վերնախավը, զինվորականներն ու բնակչությունը քաջ գիտակցում էր Աղբյուրի ծրագրերի մասին: Պետք է ընդգծել, որ ժամանակակից թուրք-աղբյուրյանական ծրագրերը կյանքի են կոչվում և շարժվում են առաջ այն նույն տրամաբանությամբ, որով նրանք գործում էին 100 տարի առաջ: Նրանց ծրագրերը չեն փոխվել, նրանք շարժվում են նույն բանաձևով: Փոխարենը՝ մենք չենք գիտակցում, թե իրականում ինչ է կատարվում: Պարզապես հարկավոր էր ժամանակին կարգալու ու զոհն մի փոքր տեղեկություն ունենալ Հայոց պատմության մասին, և այդ դեպքում Հայաստանի Հանրապետությունում կապրեին քաղաքացիներ, որոնց ճնշող մեծամասնությունը նախապես կհասկանար մեր թշնամիների քայլերի հաջորդականությունը, նպատակն ու տրամաբանությունը:

168.am
Զ. Շուշեցի

եղել է ու կլինի մեր մշտական մտահոգությունը՝ Կամավորական բանակի և նրա բնական ու մնայուն դաշնակից Հայաստանի հետ ընդհարվելու պարագային: Գործերի ներկա վիճակում Հայաստանը մեզ համար վտանգավոր չէ, բայց մնան բարենպաստ կացությունը չի կարող երկար տևել, և մենք պետք է պատրաստվենք ավելի վատ դրության համար:

Ղարաբաղի վերջնական կորստի

մար: Այդպիսով, Ղարաբաղը կարող է մեր ոչ մեծ բանակից բավական զգալի ուժեր գրավել ճակատից: Սակայն, կան միջոցներ Ղարաբաղի պահպանության համար ոչ միայն դաշտային զորքերը չթուլացնելու, այլ ճակատի համար կենդանի ուժ էլ հանելու նրա խորքերը՝ թողնելով բավականաչափ զորամասեր Ղարաբաղի ընդհանուր նահանգապետության շրջանի կարգի ապահովության համար:

ման Ղարաբաղում:

Քրդական զորամասերի կազմակերպությունը հանգամանորեն մշակելու համար անհրաժեշտ է առայժմ պարզել, թե որքան հետևակ ու ծիավոր մարտիկներ կարող են տալ քրդերը: Հաղորդելով ձեզ այս մասին՝ խնդրում են ձեր գերագնացության հայտնել ձեր կարծիքը և հարողով խնդրված թվերը»: (Հատվածը վերցված է Սիմոն Վրացյանի «Հայաստանի Հանրապետություն»

Ս. Պարբիոյի անվան կիրառական մաթեմատիկայի ամբիոնի ղեկավար, որտեղ էլ հիմնել էր իր գիտական կենտրոնը, որը մոր փառք է բերել ճանաչված ակադեմիկոսին:

Ատոմյանի անվան հետ են կապված բազում գաղտնի գեներալից միջուկային ու ջերմամիջուկային հրթիռների առաջնորդող համակարգերը: Ատոմյանի գյուտերի շնորհիվ օդում հայտնաբերվում են թշնամու կողմից արձակված ռումբերը, հրթիռները և պայթեցվում: Նրա հայտնագործությունների հիման վրա ԱՄՆ-ը որոշել է ստեղծել հակահրթիռային վահան, որը ԱՄՆ-ին կդարձնի անհասանելի բոլոր այն պետությունների համար, որոնք կփորձեն հրթիռակոծել այդ երկիրը:

Մարդկության համար անասիման կարևոր են Գևորգ Ատոմյանի գիտական հայտնագործությունները, որոնք ԱՄՆ-ի կողմից պահվում են խիստ գաղտնի: Ցավալի է, որ այդ հանձարի կյանքի թելը կտրեցին թուրքիայի գաղտնի ծառայության գործակալները՝ թունավորման միջոցով:

Պարոն Բայրեն, կարող են շարունակել մյուս հայ գիտնականների և Ձեր բանակի հայ գեներալների գործունեության մասին, բայց կարծում են, այդքան էլ բավական է, որ համոզվեք, որ թուրք-ազերիի ձեռքը չբռնելով՝ թույլ եք տալիս ոչնչացնել ապագա հայ գիտնականների: Դա անվազն ներելի չէ:

Պարոն Վ. Պուտին, ծերունական շնորհակալություն Ձեզ, որ Ձեր անմիջական ջանքերով դադարեցվեց 2020թ. սեպտեմբերի 27-ին Աղբյուրի կողմից Լեռնային Ղարաբաղի դեմ սկսված 44-օրյա պատերազմը, որը սովորական պատերազմ չէր, այլ հայերի ցեղասպանություն: Աղբյուրը և թուրք ասկյարները ոչ թե կռվում էին ինչ-որ թշնամու դեմ, այլ

Ղարաբաղ էին մտել՝ ոչնչացնելու տեղի հայ բնակչությանը և տեղ դառնալու նրա ունեցվածքին: Նոր սերունդը աղբյուրացու դեմք չի տեսել և չի ճանաչում, նույնը և աղբյուրացիներն, այս 20-30 տարիների ընթացքում ոչ իրար հետ չփում է եղել, և ոչ էլ հեռուստատեսությամբ են իրար դեմք տեսել: Հայերը «թշնամի» բառ չեն օգտագործել, այլ հակառակորդ են ասել, իսկ աղբյուրացիները մանկապարտեզից սկսած հային համարել են թիվ մեկ թշնամի և ատելություն սերմանել հայի դեմ: Եվ ահա ռազմադաշտում ոչ միայն սպանել են հայերին, այլև սպանելուց հետո գիշատիչ կենդանիների պես հողոտել են զոհված հայ զինվորների դիակները ու այսօր էլ, պատերազմի ավարտից ավելի քան 7 ամիս անց, Աղբյուրի տիրապետության տակ անցած տերիտորիաներից հայտնաբերվում են խոշտանգված դիակներ, հայ զինվորի դիակներ: Պարոն Վ. Վլադիմիրովիչ, Դուք և աշխարհի մեծերը պետք է լավ ճանաչեք հայերին, մասնավորապես Ղարաբաղցիներին, որոնց արյունն է հոսում աշխարհահռչակ անհատների երակներում, այնպիսիք, ինչպիսիք էին գեներալ Սուլթանովը, Ստալինը, զորավար Բարկլայ դե Տոլլին, մարշալ Ռոկոսսովսկին, ավելի քան 50 անհատներ: Խորհրդային Միության 15 հանրապետություններից միայն 3 հանրապետություն էր, որ ուներ մարշալներ, իսկ փոքրիկ Ղարաբաղը տվել է 5 մարշալ և 30-ից ավելի գեներալներ, էլ չեն խոսում գիտնականների մասին, որոնք մեծ ներդրում ունեն հԱՅՍՏԱՆԻ ՌԴ ռազմական հզորության գործում: Այսօր ռուսական լրատվամիջոցներից հապարտությամբ են ընթերցում, որ հայ գիտնականները Ռուսաստանը դարձրել են միջուկային գերտերություն, բայց չէ՞ որ ԱՄՆ-ն էլ է

պարտական հայերին, նրանց միջոցով միջուկային գերտերություն է դարձել: Խնդրում են ծանոթանաք Ռուսաստանի Դաշնության միջուկային կենտրոն և փորձարարական ֆիզիկայի համառուսական գիտահետազոտական ինստիտուտի գլխավոր կոնստրուկտոր, կոնստրուկտորական բյուրոյի վարիչ Ս. Քոչարյանի աշակերտ և փոխանորդ Յու. Հ. Ֆայնկովի, ՌԴ գիտահետազոտական բաժնի պետ Ա. Վ. Վեսելովսկու «Միջուկային զինամթերքի գլխավոր կոնստրուկտորը» հողվածին, որը վերաբերում է մեր Ղարաբաղի գիտնականին՝ Սամվել Գրիգորի Բոչարյանին: Քոչարյանի ղեկավարությամբ և մասնակցությամբ էր մարտական հերթապահության դրվել մի քանի սերունդների միջուկային զինամթերքը, որը փուլ առ փուլ կատարելագործվել էր կրիչների՝ նրանց կառավարման համակարգերի զարգացմանը զուգընթաց, այդ թվում՝ հավանական հակառակորդի հակահրթիռային պաշտպանության համակարգերի հարթափարման և հրթիռամիջուկային հարձակումից սեփական տարածքի պաշտպանության նպատակով: Ներկայումս ևս Ս. Քոչարյանի միջուկային գեներալները, միջուկային ռազմամթերքը Ռուսական բանակի սպառազինության մաս են կազմում և իսկական մարտական հերթապահություն են կրում ապահովելով Ռուսաստանի Դաշնության անվտանգությունը, զրկված է վերը նշված հողվածում: Ավելորդ են համարում նշել նաև բազմաթիվ հայ գիտնականների հետ Ղարաբաղի գիտնականների անունները, որոնք մեծ ներդրում ունեն հԱՅՍՏԱՆԻ ՌԴ-ի զորացման բնագավառում: Դրանցից են Ալիխանով Աբրահամ Մանուկի. խորհրդային արագացուցիչի ստեղծողը, ատոմային և ջրածնային գեներ

ների տեսական հիմքերի մշակողներից մեկը: Իոսիֆյան Անդրանիկ Ղևոնդի. խորհրդային օդերևութաբանական արբանյակների, տիեզերական արբանյակների, էլեկտրական ավտոմատ սարքերի գլխավոր կոնստրուկտոր, Մոսկվայի էլեկտրատեխնիկայի ինստիտուտի տնօրեն:

Միկոյան Արտեմ Իվանի. «ՄԻԳ» մակնիշի ինքնաթիռի գլխավոր կոնստրուկտոր:

Կոնյանց Իվան Լյուդվիգի. ջրածնային ռումբի կաղապարման գլխավոր կոնստրուկտոր:

Կարծում են, այսքանը բավական է, որ ասեն. պատերազմը դադարեցնելով՝ փրկել էք ապագա գիտնականների կյանքերը: Հարգելի Վլադիմիր Վլադիմիրովիչ, Դուք և աշխարհի հռչակավոր անհատներ ի վիճակի եք բռնել Ալի-Էրդողանի թունավոր ձեռքերը և թույլ չտալ հետագա արյունահեղություն: Առանձնապես պետք է կանխվեն թուրք-հայկական պատերազմները, որոնք ավելի զիշատիչ են լինում, ավելի ահավոր: Խնդրում են պահպանեք մեր մուրաբակի, մեր բոլորի տուն երկիր մուրաբակի խաղաղությունը: Երկիրը փրկեցեք թուրք-ազերիներից, որոնք այքան են հղիացել, որ 44-օրյա պատերազմն ավարտվելուց հետո անցել է մոտ 8 ամիս, սակայն բաց են թողնում հայ գերիներին այն դեպքում, երբ ամբողջ աշխարհն է հորդորում: Նրանց ոհմակը պատերազմ է մղում հայկական հուշարձանների և եկեղեցիների դեմ:

Մառլեն ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ
Մշակույթի վաստակավոր աշխատող,
20-րդ դարի լավագույն մանկավարժ,
անհարական թոշակառու

ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՈՒՍՈՒՅԳԻՆ

ՖՈՒՆԿՑԻԱՆԵՐԻ ՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ՀԱՎԱՍԱՐՈՒՄՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

2. Ֆունկցիաների արժեքների բազմության օգտագործումը.

Սահմանում: $y=f(x)$ ֆունկցիայի արժեքների տիրույթ կոչվում է y փոփոխականի արժեքների բազմությունը x փոփոխականի թույլատրելի արժեքների դեպքում:

Սահմանում: $y=f(x)$ ֆունկցիան կոչվում է սահմանափակ տվյալ միջակայքում (գտնվում է իր որոշման տիրույթում), եթե գոյություն ունի որևէ թիվ $M > 0$, որ արգումնետի տվյալ միջակայքին պատկանող բոլոր արժեքների համար տեղի ունի հետևյալ անհավասարությունը՝ $|f(x)| \leq M$:

Դիցուք տրված է $f(x)=g(x)$ հավասարումը, որտեղ $f(x)$ -ը և $g(x)$ -ը տարրական ֆունկցիաներ են, որոշված D_1 և D_2 բազմություններում: Ֆունկցիաների փոփոխման տիրույթը նշանակենք համապատասխանաբար՝ E_1 և E_2 : Եթե x_1 -ը հանդիսանում է հավասարման լուծումը, ապա տեղի կունենա թվային հավասարություն $f(x_1)=g(x_1)$: Այսպիսով, եթե հավասարումը լուծում ունի, ապա $f(x)$ և $g(x)$ ֆունկցիաների արժեքների տիրույթները ունեն ընդհանուր տարրեր ($E_1 \cap E_2 \neq \emptyset$): Եթե E_1 և E_2 բազմությունները ընդհանուր տարրեր չունեն, ապա հավասարումը լուծում չունի: Նշենք, որ $E_1 \cap E_2 \neq \emptyset$ պայմանը անհրաժեշտ, բայց ոչ բավարար պայման է:

Անդրադառնալ այն հավասարումների լուծմանը, որոնց լուծումը բացահայտում է ֆունկցիայի նշված հատկությունների կիրառումը:

Օրինակ 4: Լուծել հավասարումը

$$\sqrt{x} + \sqrt{x+9} = -2$$

Լուծում: Հավասարման ձախ մասը որոշման տիրույթի բոլոր կետերում ոչ բացասական մեծություն է, իսկ աջ մասը որոշման տիրույթի բոլոր կետերում ընդունում է բացասական արժեքներ: Հետևաբար, հավասարումը լուծում չունի:

Պատ.՝ Հավասարումը լուծում չունի:

Օրինակ 5: Լուծել հավասարումը

$$\sqrt{x} + \sqrt{x+9} = 2$$

Լուծում: Գտնենք հավասարման ԹԱԲ-ը.

$$\begin{cases} x \geq 0 \\ x+9 \geq 0 \end{cases} \Leftrightarrow x \geq 0$$

Հավասարման ձախ մասը որոշման տիրույթի բոլոր կետերում $\sqrt{x} + \sqrt{x+9} \geq 3$, իսկ աջ մասը հաստատուն մեծություն է և հավասար է 2-ի: Հետևաբար, հավասարումը լուծում չունի:

Պատ.՝ Հավասարումը լուծում չունի:

Օրինակ 6: Լուծել հավասարումը.

$$\frac{3}{\pi} \arccos(x-1) = 3 + \sqrt{x^4 - 4x^3 + 4x^2}$$

Լուծում: $\arccos x$ ֆունկցիայի սահմանումից հետևում է, որ x -ի բոլոր թույլատրելի արժեքների համար $0 \leq \arccos(x-1) \leq \pi$: Հետևաբար,

$$0 \leq \frac{3}{\pi} \arccos(x-1) \leq 3:$$

Սակայն անհայտի բոլոր թույլատրելի արժեքների համար

$$3 + \sqrt{x^4 - 4x^3 + 4x^2} \geq 3$$

Հավասարությունը տեղի կունենա, եթե x -ը բավարարի հետևյալ համակարգին

$$\begin{cases} \frac{3}{\pi} \arccos(x-1) = 3 \\ 3 + \sqrt{x^4 - 4x^3 + 4x^2} = 3 \end{cases}$$

Լուծենք համակարգի 1-ին հավասարումը.

$$\arccos(x-1) = \pi \Rightarrow x-1 = -1 \Rightarrow x = 0$$

$x = 0$ արժեքը բավարարում է նաև համակարգի 2-րդ հավասարմանը:

Այսպիսով $x = 0$ արժեքը հանդիսանում է համակարգի, հետևաբար, նաև տրված հավասարման լուծումը:

Պատ.՝ $x = 0$

Օրինակ 7: Գտնել

$$f(x) = \frac{2x^2 - 4x + 1}{x^2 + 3}$$

ֆունկցիայի արժեքների տիրույթը:

Լուծում: Լուծենք պարամետր ներմուծելու մեթոդով:

Նշանակենք

$$\frac{2x^2 - 4x + 1}{x^2 + 3} = a \Leftrightarrow 2x^2 - 4x + 1 = a(x^2 + 3) \Leftrightarrow (2-a)x^2 - 4x + 1 - 3a = 0$$

ա) երբ $a = 2$, հավասարումը դառնում է զծային՝ $-4x - 5 = 0$, որն ունի լուծում՝ $x = -5/4$:

բ) երբ $a \neq 2$ հավասարումը քառակուսային է և լուծում ունի, երե հավասարման տարրերիչը (դիսկրիմինանտը) լինի ոչ բացասական՝

$$D \geq 0 \Leftrightarrow 3a^2 - 7a - 2 \leq 0 \Leftrightarrow a \in \left[\frac{7 - \sqrt{33}}{6}; \frac{7 + \sqrt{33}}{6} \right]$$

$$\text{ա) և բ) լուծումների միավորումից կստանանք՝ } E(f) = \left[\frac{7 - \sqrt{33}}{6}; \frac{7 + \sqrt{33}}{6} \right]:$$

Օրինակ 8: Գտնել ֆունկցիայի արժեքների տիրույթը.

$$y = \frac{x^2 + 2x + 2}{x + 1}$$

Լուծում: Տրված հավասարությունը դիտարկենք որպես հավասարում x -ի նկատմամբ, որը բերվում է քառակուսային հավասարման՝

$$x^2 - (y-2)x - (y-2) = 0$$

Նկատենք, որ $x = -1$ թիվը (որի դեպքում տրված ֆունկցիան որոշված չէ) չի կարող լինել ստացված քառակուսային հավասարման արմատ: Խնդրի պահանջն իրականացնելու համար բավական է ներկայացնել այդ հավասարման արմատի գոյության անհրաժեշտ և բավարար պայմանը, այսինքն՝ տարրերիչը լինի ոչ բացասական՝

$$D \geq 0 \Leftrightarrow (y-2)^2 + 4(y-2) \geq 0$$

Լուծելով այդ անհավասարումը, կստանանք՝ $y \in (-\infty; -2] \cup [2; \infty)$:

Այդ բազմության յուրաքանչյուր y -ի համար գոյություն ունի x անկախ փոփոխականի այնպիսի արժեք, որը տեղադրելով ֆունկցիայի մեջ կստանանք y -ի նշված արժեքը: Այսպիսով, $E(y) = (-\infty; -2] \cup [2; \infty)$:

Պատ.՝ $E(y) = (-\infty; -2] \cup [2; \infty)$:

Օրինակ 9: Գտնենք ֆունկցիայի արժեքների տիրույթը.

$$y = \sqrt{-3x^2 + 12x - 3}$$

Արմատատակ գտնվող քառակուսի եռանդամից անջատենք երկանդամի քառակուսի՝ $y = \sqrt{9 - 3(x-2)^2}$: Ցանկացած թույլատրելի x -ի ($x \in D(f)$) դեպքում՝

$$0 \leq \sqrt{9 - 3(x-2)^2} \leq 3:$$

Ստացվում է, որ y -ի արժեքների բազմությունը պատկանում է $[0; 3]$ հատվածին:

Ցույց տանք, որ այն համընկնում է $[0; 3]$ հատվածի հետ, այսինքն՝ $E(y) = [0; 3]$:

Դրա համար բավական է հիմնավորել հետևյալ պնդումը: $[0; 3]$ հատվածի ցանկացած b թվի համար գոյություն ունի x -ի այնպիսի արժեք, որ $\sqrt{9 - 3(x-2)^2} = b$: Իրոք վերջին հավասարումը համարժեք է $9 - 3(x-2)^2 = b^2$ հավասարմանը, որտեղից կունենանք՝

$$(x-2)^2 = \frac{9-b^2}{3}$$

Քանի որ $0 \leq b \leq 3$, ապա $\frac{9-b^2}{3} \geq 0$, ուստի ստացված հավասարումն ունի արմատ: Հետևաբար, կարող ենք գրել $E(y) = [0; 3]$:

Պատ.՝ $E(y) = [0; 3]$:

(Շարունակելի)

Ալեքսանդր ԽԱՀԱՏՐՅԱՆ
Ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

ՇԵՐՈՍԱՊԱՏՈՒՄ

ՈՂՋ ԿՅԱՆՔԸ՝ ՆՎԻՐՈՒՄ



Չայրենիքը սիրում են ոչ թե խոսքով, այլ գործով: Ինչ որ ունեի, տվի հայրենիքիս...

44-օրյա պատերազմը փոխեց բոլորիս կյանքը՝ դարձնելով այն ավելի իմաստազուրկ, աննպատակ ու անորոշ, քան պատերազմից հնարավոր էր: Կորուստներն այնքան մեծ էին ու անդառնալի (այսօր էլ դեռ շարունակվում են), որ քիչ էր մնում՝ մարդ խելագարվի, գլուխը պատեպատ խփի՝ չհասկանալով, թե հանուն ինչի ունեցանք այդ ահռելի ու անիմաստ կորուստները:

Այս մի բուռ հայրենիքում այդքան զոհեր, այդքան չկայացած ընտանիքներ, որդեկորույս մայրեր, ծնողներին կորցրած մանուկներ, փշրված ու խորտակված հազարավոր երազանքներ, չիրագործված նպատակներ:

«Ինչու»-ների շարանը երբեմն մեզ տեղափոխում է 100 տարուց ավելի առաջ եղած մեր պատմության ողբերգական օրերը, երբ հայոց Յանճարի՝ Վարդապետի լուսավոր միտքը մթազնեց, ու կորավ կյանքի իմաստը: Գուցեև ինչ-որ տեղ էլ զարմացել են, թե ինչու լռեց այդ լուսավոր միտքը, ինչու խենթացավ Վարդապետը, ինչու լռեց մեր Ջանգալատուրը...

Եվ ո՞վ է առայսօր պատասխան տվել այդ ամենի համար, այս անարդար աշխարհում ումի՞ց ենք արդարություն պահանջում:

Այսօր մենք էլ ենք ապրում ու քայլում խենթերի պես՝ կքած հազարավոր կորուստների ծանր բեռի տակ: Հասարակությունը կորցրել է լիարժեք արժեքներ ու արարելու իր բուռն հավատն ու ձգտումը: Ուր որ մայրում ես, ամենուր սևազգեստ մայրեր են՝ ժպիտը դեմքից հավերժորեն անհետացած, երիտասարդ այրիներ՝ կյանքով լի, որք մանուկներ՝ զուրկ ծնողական գուրգուրանքից: Միակ բանը, որ ճակատագիրը «հաճույքով ու շռայլորեն» մատուցել է մեզ ու դեռ էլի գոհացած չէ, մեր անթիվ-անհամար զոհերն են, մեր ազգի ճրագները, մեր պահպանները, մեր լույսի կտոր տղաները, որ կարող էին սարեր շուռ տալ, բայց հող հայրենին գերադասեցին իրենց մատաղ կյանքից:

Այսօր ամենուրեք տեղի ունեցող հիշատակի միջոցառումները նույն բովանդակություն ունեն՝ «Ձեզ բացակա չենք դնի», «Ոչ ոք չի մոռացվել», «Մերօրյա հերոսները», «Հավերժի ճամփորդները», «Կյանքս հայրենիքիս», «Անավարտ գարուններ» և այլն:

Կյանքը հայրենիքին նվիրաբերած հերոսներից մեկն էլ Ասկերանի շրջանի հնամասն պատերազմի չորս տասնյակ նահատակների կողքին, հավերժորեն պատվավոր տեղ զբաղեցրած քաջազուն Լեռնիկն է՝ միշտ ներկա, երբեք չբացակայող, լուսավոր ապագայի հանդեպ ունեցած հավատը դեմքին դրոշմած:

Լեռնիկ Վլադիմիրի Գաբրիելյանը ծնվել է

1990թ. հոկտեմբերի 20-ին Ասկերանում: Ծափառազիրը մանկությունից է դառնացրել Լեռնիկի ու նրա փոքր քրոջ՝ Մարինեի կյանքը: Ընդամենը հինգ տարեկան էր Լեռնիկը, որ կորցրեց հորը (1995թ.), երեք տարի էլ անց՝ մորը (1998թ.): Տատիկն էլ ծնողներից առաջ էր մահացել, և երկու որբերը՝ եղբայր ու քույր, մնացին հիմնականում մորաքրոջ՝ Ռիմայի խնամքին: Գետո, երբ մի քիչ հասակ են առել, քույր ու եղբայր ապրել են առանձին՝ իրենց հայրական տանը, ժամանակից շուտ մեծացել՝ չվայելելով մանկության անհոգ ու երջանիկ տարիները: Լեռնիկը հաճախել է Ասկերանի Էդմոն Բարսեղյանի անվան միջնակարգ դպրոցը: 2004-2005 ուստարում ավարտելով 8-րդ դասարանը՝ ընդունվել է ԳՂ Ազգային համալսարանի միջին մասնագիտական կրթական ծրագրերի կենտրոն (քուլտ): 2008-2010թթ. ժամկետային զինծառայության է անցնում Հայոց բանակում, որտեղ էլ ձևավորվում է նրա մարդկային կերպարը՝ մեծահոգի, ընկերասեր, բարեխիղճ ու կարգապահ զինծառայող, ֆիզիկապես կոփված ու բարոյապես կայուն, արատավոր հակումներից զերծ: Ծառայության ընթացքում արժանիորեն վայելել է զինվորական կոլեկտիվի խոր սերն ու հարգանքը: Ծառայությունը սկսել և շարունակել է հետախուզական վաշտում: Ապրած ողջ կյանքը անձնուրաց նվիրում ու ծառայություն էր Հայոց բանակին, որի համար էլ պատվոգրերով պարգևատրվել է 2009-ին՝ բարձր ցուցանիշների ակտիվության համար (հետախույզ-զննարկային կապակցությամբ մարտական պատրաստության գործում ցուցաբերած բարձր արդյունքների և օրինակելի կարգապահության համար, 2014-ին՝ մարտական ծառայության ընթացքում մարտական պատրաստությունից բարձր ցուցանիշներ ցուցաբերելու, մարտական հերթապահության ժամանակ աչքի ընկնելու համար:

2010թ., ավարտելով ծառայությունը, ամուսնացել է խնամապատիվ Վալենտինայի հետ, տուն առել հնամասն ու շարունակել ծառայել հայրենիքին, երկու զավակ պարգևել մեր աշխարհին:

2016-ին Շուշիում ավարտում է կիսատ թողած ուսումը. նրան շնորհվում է հաշվապահի որակավորում՝ «Էկոնոմիկա, հաշվապահական հաշվառում և աուդիտ (ազդույթ-րենային համալիրում)» մասնագիտությամբ:

2016-ի ապրիլյան քառօրյա ժամանակ և աչքի է ընկել իր ակտիվ մասնակցությամբ ու արժանացել խրախուսանքի:

2020թ. սեպտեմբերին Լեռնիկը ծառայում էր որպես ՊԲ Ն զորամասի մոտոհրաձգային զուամրտակի դիպուկահարների դասակի խոշոր տրամաչափի հրացանների ջոկի դիպուկահար, կրոսեր սերժանտ: Հոկտեմբերին՝ պատերազմի օրերին, նա համագործակցի մարտական ընկերների՝ Մակարյան Էդգարի և Հարությունյան Արմենի հետ պաշտպանում էր Արցախի Մարտունի քաղաքի մարտական դիրքերը: Զինակից ընկերները հիշում են, որ այդ դաժան մարտերի ընթացքում Լեռնիկը հաճախ էր կրկնում. «Այստեղից, այս դժոխքից հենց պրծնենք, անպայման Մեծ Նանը կգնանք (սրբավայր է հնամասն պատում)»: Ցավոք, Մեծ Նանն էլ ի գործ չէր դրվել պաշտպանել հայրենյաց պաշտպանին: Մինչև վերջ հավատում էր մեր հաղթանակին, բայց 2020թ. հոկտեմբերի 23-ին (ծննդյան օրից ընդամենը 3 օր անց) ընդմիջտ խավարեց 30-ամյա Լեռնիկի պայծառ արևը՝ իրեն բաժին հասած որբությունը փոխանցելով իր զավակներին (ճակատագրի ինչպիսի՝ հեղանակը...):

Մարտունիում էին, երբ գլխավերևում հայտնվեցին ոսոխի սև գիշանգոլ անօդաչուները՝ մահ սփռող ու կործանարար: Էդգարն ու Արմենը ականա հիշեցին Լեռնիկի խոսքերը... Որոտացին հզոր պայթյուններ, վիրավորվեցին Էդգարն ու Արմենը: Շտապ օգնության մեքենայով տեղափոխվելիս, նրանք ասացին, որ Լեռնիկն իրենց հետ էր, ի՞նչ եղավ նրան...

Որոնումների արդյունքում հայտնաբերվեց մի մասունք միայն հերոսի մարմնից, որն այսօր հանգչում է հնամասն գերեզմանատանը՝ հուշահամալիրում, իսկ հոգին մնացել է ու հավերժորեն սավառնելու է Մարտունի քաղաքի աստղառատ երկնքում:

Հերոսի զավակներից ավագը՝ դուստր Ռայան, որ երջանկահիշատակ տատիկի անունն է կրում, այսօր սովորում է հնամասն Արթուր Չայրապետյանի անվան միջնակարգ դպրոցի 2-րդ դասարանում, շարունակում է կատարել հորը տված խոստումը. միշտ լավ սովորել՝ վառ պահելով հոր հիշատակը, իսկ 6-ամյա որդին՝ Արմանը, հաճախում է գյուղի մանկապարտեզի մասնապատրաստական խումբը: Նա հպարտ է իր հայրիկով: Չմայած փոքր տարիքին, հասկանում է, որ իր հայրը հերոս է, և ինքն էլ հոր գործը շարունակող շառավիղն է: Բահաբուր պապիկի նվիրած զինվորական համազգեստը հագած՝ անընդհատ քայլում է ու կրկնում. «Պապիկս այս համազգեստը նվիրել է ինձ, որ մեծանամ, պապայիս նման հերոս դառնամ»:

Փոքրիկ Արման, երանի՜ քո հերոսությունը խաղաղ պայմաններում իրականանա, ոչ թե ռազմի դաշտում, մեծանաս ու հասակ առնես միմիայն խաղաղ պայմաններում:

2020թ. սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի սանձազերծած 44-օրյա պատերազմը ծեծել է բոլորիս դեմքը՝ ուղղակի թե միջնորդավորված, ու այդ ծանր կորուստների կսկիծը դեռ շատ է ուղեկցելու մեզ մեր առօրյա գործողություններում: Բոլորիս պարտքն է սպեղանի դնել այդ զոհերի հարազատների անբուժելի վերքերին, մեղմել նրանց անսահման վիշտը:

Հերոս Լեռնիկի այրին՝ երիտասարդ Վալենտինան, հուզմունքով է ներկայացնում այն քաղցր հուշերը, որ կապված են սիրող ամուսնու, գորովագութ ու հոգատար հոր, անկրկնելի անձնավորության հետ:

Խոստովանում է, որ երկար ժամանակ չէր կարողանում տիրապետել իրեն, թվում էր, թե եկել է իր վերջը, բայց հետո հիշել է Լեռնիկի գերեզմանի առաջ տված իր խոստումը՝ երեխաներին հասցնել իրենց նպատակին, հավաքել է իրեն ու հիմա փորձում է իրականություն վերադառնալ: Երկու անչափահաս երեխաներին մեծացնելու և դաստիարակելու գործում նրան օգնում են երեխաների պապիկն ու տատիկը, որոնք փորձում են ինչ-որ չափով մեղմել հոր բացակայությունը և երեխաներին հայրիկին արժանի զավակներ մեծացնել: Երեխաներն էլ ամեն օր գնում-կանգնում են դպրոցի Փառքի սրահում տեղադրված իրենց հերոս հայրիկի լուսանկարի առջև, ծաղիկներ խոնարհում ու այդպես հագեցնում իրենց կարոտը:

2020թ. դեկտեմբերի 25-ի ԱՀ նախագահի հրամանագրով՝ պետական սահմանը պաշտպանելիս ցուցաբերած արիության ու խիզախության համար Արցախի ՊԲ Ն զորամասի զինծառայող, կրոսեր սերժանտ (պայմանագրային) Լեռնիկ Գաբրիելյանը հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայություն» մեդալով:

«Անպարտելի է նա, ով մահն է ընտրում իրեն առաջնորդ»: (Գ.Ն.Շոթի)

Սուրայա ՂԱԶՐՈՅԱՆ

ՇՆՈՒՆՊԳ ԸՆՈՐՀԱՎՈՐ, ՀԵՐՈՍ



Սեպտեմբերի 27... չարագույժ մի օր, որ փոխեց արարող մի ողջ ժողովրդի ճակատագիր: Հազարավոր նպատակներ ու երազներ առաքուր եղան թշնամու ոտքի տակ, բազում լուսավոր ճակատագրեր խավարեցին արևի լույսի ներքո: Այդ արմաների օրերից անցել է յոթ ամիս, սակայն յոթ դար հետո էլ չեն մոռացվի հազարավոր անուններ, որոնք իրենց կյանքի գնով գնահատեցին սերն առ հայրենիք: Այդ հազարավոր անունների շարքում ոսկե տառերով գրվեց նաև եղբորս՝ Մխիթար Ավետիքի Աղաբեկյանի անմահ անունը:

Մխիթար, իմ սիրելի՜ եղբայր, ես չեմ գրելու քո կենսագրության մասին, ես պատմելու եմ քո անաղարտ էության մասին, որը պիտի մեր արյան յուրաքանչյուր մասնիկի հետ փոխանցենք սերնդեսերունդ՝ քո հայրենասիրությամբ ու անձնագոհությամբ դաստիարակելու քաջ հայորդիներ:

Իմ մտապատկերում հավերժ կմնաս մի տղա, որի զենքը իր գիտելիքն էր, արտաքին ու ներքին գեղեցկությունը: Քո մեջ ամբարված էին մեր ապուլապարի ուժն ու զորությունը, խելքն ու ուշիմությունը: Դեռ երեկ սպիտակամաշկ ու փամփիլի փոքրիկն այսօր արդեն հերոս է: Մանկուց քո ջիւջ ու մաքուր աչքերում արդեն գծագրված էր հերոսացման ուղին: Դու, որ ծնունդն էիր հերոսական Վաղուհասի հող ու ջրի, քո գիտելիքներով պիտի դառնայիր մեր հավերժող Արցախի մեծանուն անհատներից մեկը, բայց... դաժան ոսոխը թեքեց մեր բախտի անիվը. նորակոչիկ զինվորից միանգամից դարձար մարտիկ, քանզի հայրենյաց պաշտպանի ոգին յուրաքանչյուր հայ զավակի գեմի մեջ է:

Մեր հերոս Մխիթար, երկրային կյանքում դու ծաղկեցիր 18 գարուն: Քո ժպիտով էին բացվում մայրիկիդ առավոտները, քեզանով էր շունչ ու ոգի առնում նրա կյանքի յուրաքանչյուր պահ: Հունիսի 7-ին դու կդառնայիր 19 տարեկան (Մխիթարը ծնվել է 2002թ. հունիսի 7-ին Մարտակերտի շրջանի Վաղուհաս գյուղում, բայց ապրել է Մարտակերտ քաղաքում), սակայն դու զոհվեցիր, որ քո կյանքով ծաղկեն մեր գարունները, խաղաղ բացվեն մեր արշալույսները:

Մեր հերոս, խոստանում ենք հավերժ ծաղկուն պահել քո արյունով շաղախված Արցախ աշխարհի սուրբ հողը, խաղաղ պահել քո լազուր աչքերին նմանվող արցախյան երկինքը:

Շնորհավոր 19-րդ հերոսական տարեդարձդ, Մխիթար:

Երջանիկ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Առաջածորի Ա. Պողոսյանի անվան
միջն. դպրոցի ՄՎԱԳՏՏ

ԱՏԵՐԵԱԳՈՐԾԱԿԱՆ

ՄԵՆՔ ԴԵՌ ՄԻԱՍԻՆ ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐ ԵՆՔ ԿԵՐՏԵԼՈՒ

Մայիսի 31-ին Ստեփանակերտի պատկերասրահում բացվեց ՀՀ վաստակավոր նկարիչ, դիզայներ Արև Պետրոսյանի անհատական ցուցահանդեսը, որը կրում էր «Ապրենք, որ ապրեցնենք» խորագիրը, և այն հետպատերազմյան շրջանում առաջին աժիոտաժն էր ցուցասրահում. ներկա էին ԱՀ ԱԺ պատգամավորներ, կառավարության անդամներ, մշակույթի աշխատողներ, հասարակայնության այլ խավերի ներկայացուցիչներ:



Քանի որ նկարիչը առաջին անգամն է ցուցադրվում Արցախում, պատկերասրահի տնօրեն Ելենա Դադայանը մի քանի խոսքով ներկայացրեց կենսագրությունը և ստեղծագործական ճանապարհը: Ծնվել է Երևանում, ավարտել Փ. Թերլեմեզյանի անվան գեղարվեստի ուսումնարանը, ապա Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի կերամիկայի, գեղանկարի բաժինները: Ուսանել է նաև համակարգչային գրաֆիկա, մենեջմենթ և կառավարում, գեղարվեստական լուսանկարչություն: Հայտնի կազմակերպությունների հետ

աշխատել է որպես ձևավորող և դիզայներ: Կատարել է բազմաթիվ առանձնատների, համալիրների, հանգստյան գոտիների, բնակարանների ներքին և արտաքին ձևավորումներ: Հանդես է եկել բազմաթիվ ցուցահանդեսներով Հայաստանում և արտերկրում՝ Ռուսաստանի Դաշնությունում, ԱՄՆ-ում, Վրաստանում, Իսպանիայում, Չինաստանում, Լիբանանում, Տաջիկստանում:

Ցուցադրված գործերի մեծ մասն արված է խառը տեխնիկայով, օրգանական ապակի, ոսկյա և արծաթյա ֆիթեղներով, որը նկարչուհու բերած նորությունն է ոչ միայն իր, այլև արվեստի աշխարհում: Այցելուները երկար կանգ

էին առնում «Առավոտյան շքեղություն», «Հեքիաթի ոգին», «Ծաղիկներն նահատակաց», «Արմատներ», «Արշալույս», «Հայացք անցյալից» և այլ գործերի առաջ: ԱՀ ԿԳՄՍ նախարար Լուսինե Ղարախան-



րոսյանը: Մենք դեռ միասին հաղթանակներ ենք կերտելու: Արցախն իմ արյամբ, իմ գիտակցությամբ այն մշակութային կետերից է, որ ժամանակ ու տարածություն չի ճանաչում, Արցախը մեր լինելության խորհրդանշանն է: Իմ հայրենիքի այս հատվածի քարը, թուփը, ծառը ես կրում եմ իմ մեջ: Այն, ինչ որ ես կամ որպես արվեստագետ, որպես քաղաքացի, պարտական եմ անվանի ծնողներին՝ քանդակագործ հորս և ջութակահար մորս: Նրանցից եմ ժառանգել արվեստի հանդեպ իմ մոտեցումները, սերը հայրենիքի հանդեպ, աշխատասիրությունը, նվիրվածությունը արվեստին, նույնիսկ մի քիչ խենթ լինելը: Այն, որ ես այսօր այստեղ եմ, խոսում է նաև իմ ընտանիքի մարդկային տեսակի մասին: Իմ գործերում ես կարևորում եմ սերը, խաղաղությունը, կապը, շնչառությունը բնության հետ», - ասաց նկարչուհին: Ցուցահանդեսը կտևի 14 օր:

Ն.ՍՈՂՈՍՏՈՅԱՆ

ԵՐԲ ԿԱ ՀԱՐԱՏԵՎԵԼՈՒ ԿԱՄՔԸ

ԱՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից մայիսի 11-ին Ստեփանակերտի Մ. Մաշտոցի անվան հ. 4 հիմնական դպրոցում անցկացվեց «Հարատևման կամքը» խորագրով ստեղծագործական շարադրությունների մրցույթ, որին մասնակցեց մայրաքաղաքի և շրջանների հանրակրթական դպրոցների 8-12-րդ դասարանների 64 աշակերտ: Ընդհանուր առմամբ ներկայացված էր 15 թեմա, յուրաքանչյուր դասարանի համար վիճակահանությանը ընտրվեց 3-ը, որոնցից ըստ ցանկության մեկի շուրջ իրենց մտքերը շարադրեցին մասնակիցները: Նախարարությունն ամփոփել է արդյունքները: Հանրապետական ստուգող հանձնաժողովի գնահատմամբ 9 մասնակից զբաղեցրել է մրցանակային տեղը: Առաջին տեղում Մարտակերտի շրջանի դպրոցականներն են՝ Հաթերքի Բարմեն Գրիգորյանի անվան միջնակարգ դպրոցից 11-րդ դասարանի աշակերտուհի Լուսինե Սահակյան և նույն դպրոցից 10-րդ դասարանից Լիանա Պետրոսյան, Մարտակերտի հ. 1 միջնակարգ հոսքային դպրոցի 11-րդ դասարանից՝ Մերի Հովհաննիսյան:



Երկրորդ կարգի մրցանակակիրներն են. Ռուզաննա Մուսայեյան (Գ. Հաթերք, 10-րդ դաս.), Մարթա Չիլինգարյան (Մարտակերտի շրջանի Վանքի մ/դ, 9-րդ դաս.), Մերի Ստեփանյան (Մարտունու հ.1 մի/դպրոց, 11-րդ դաս.): Երրորդ մրցանակի են արժանացել. Աննա Գասպարյան (Ստեփանակերտի հ. 5 հ/դ, 9-րդ դաս.), Լիա Մանասյան (Շուշիի մ/դ, 11-րդ դաս.), Արիմա Բաղդասարյան (Ստեփ. հ. 8 մի/դպրոց, 12-րդ դաս.): Գովասանագրի են արժանացել. Աննա Բաղդասարյան (Ստեփ. հ. 8 մի/դպրոց, 10-րդ դաս.), Մուրադ Պետրոսով (Ստեփ. հ. 12 հ/դ, 8-րդ դաս.), Էլեն Սարգսյան (Ստեփ. հ. 10 հ/դ, 9-րդ դաս.), Վիլենա Գասպարյան (Ֆիզմաթ դպրոց, 10-րդ դաս.), Էվելինա Առաքելյան (Ստեփ. հ. 8 մի/դպրոց, 10-րդ դաս.), Սիմոն Օհանջանյան (հ. 11 ավագ դպրոց, 10-րդ դաս.), Լուսինե Հայրապետյան (Ասկերանի շրջանի Նորագյուղի մ/դ, 11-րդ դաս.), Անի Գաս-

պարյան (Մարտակերտի հ. 1 մի/դպրոց, 10-րդ դաս.), Մարիամ Օհանջանյան (Մարտակերտի շրջանի Հաթերքի մ/դ, 11-րդ դաս.), Մարիամ Վարդանյան (Շուշիի մ/դ, 12-րդ դաս.), Դիանա Խաչատրյան (Մարտունու շրջանի Կաղարծու մ/դ, 10-րդ դաս.), Արիմա Գրիգորյան (Մարտակերտի հ.1 մի/դպրոց, 9-րդ դաս.), Հրաժիր Բաղդասարյան (Մարտունու շրջանի Հերիերի մ/դ, 11-րդ դաս.):

Մերի Հովհաննիսյանը համոզմունքն է. «Մենք պարտավոր ենք ապրել հանուն մեր ապրելու իրավունքի: Պարտավոր ենք ապրել արժանապատվորեն: Կարևոր է, որ պատրաստ լինենք մեր կյանքը գոհելու հանուն հայրենիքի, բայց ավելի կարևոր է՝ պատրաստ լինենք ապրելու հանուն նրա»: Մեր դպրոցականներն իրենց ապագան տեսնում են Արցախում: «Պատերազմի ընթացքում հասկացա, որ սխալ եմ եղել, սխալ եմ ապրել: Մտածում էի՝ եթե ապագայում ուրիշ տեղ լինեմ, ինչ-որ ասպարեզում ավելի մեծ հաջողությունների կհասնեմ, բայց հիմա բոլոր նպատակներս Արցախի համար են, նրան վերակենդանացնելու ու ապրեցնելու համար», - գրում է Մերի Հովհաննիսյանը: «Այսպես մեր լեռները պարտավորեցնում են ավելի ամուր կառուցել իրենցից, դառնալ ժայռերի գրկում բուսած ծառ՝ միայնակ կանգնած սաստիկ ու մոլեգին քամիների դարավանդում», - այսպես է մտածում Արիմա Գրիգորյանը: «Ցավալի է գիտակցել, որ ինձ նման հազարավոր մարդիկ կան: Բայց մենք բոլորս ուժ ենք գտել մեր մեջ և փորձում ենք ապրել», - գրում է տուն ու տեղ, ծննդավայր, հորեղբորը կորցրած Արիմա Բաղդասարյանը, որն այժմ սովորում է Ստեփանակերտի հ. 8 դպրոցում, բայց որի ձեռքը սովորույթի ուժով տնտրի տնտրոսաթերթին գրել է. «Ասկերանի շրջանի Ալեհայրյուր գյուղ, ուսուցիչ՝ Լարիսա Դանիելյան»: Պատերազմը ժամանակից շուտ հասունացրել է մեր երեխաներին: Շուշիի Խ. Աբովյանի անվան միջնակարգ դպրոցից Մարիամ Վարդանյանը կարծում է. «Այս պայքարը դեռ չի ավարտվել, ուստի պետք է ուժ գտնենք մեր մեջ, կրկին ոտքի կանգնենք, անսասան կանգնենք այս մի բուռ հողի վրա»: Մեր դպրոցականներն օժտված են մեծ լավատեսությամբ: Անկասկած, դա գալիս է

նրանց ընտանիքներից, ուսուցիչներից: Բայց չի բացառվում, որ հենց իրենք են լավատեսություն փոխանցում մեծերին: «Մենք պետք է զգայենք կորստի ցավը ու գնանք առաջ: Երդվում եմ, որ երբեք չեմ լքի հայրենիքս: Արցախյան ամուր ու դարավոր կաղնու պես կկառուցեմ հողիս, ու ոչ մի հողմ չի սասանի ինձ, որովհետև ես հավատում եմ Արցախիս լուսավոր ապագային», - այսպես է մտածում Անի Գասպարյանը: «Տանջահար ու վշտահար ժողովուրդս նորից է բարձրացնելու սեզ ճակատը, գոհ ժպտալու է արևին ու աշխարհին: Չէ՛ որ անկոտրում է նրա ոգին, անպարտ է նրա զինվորը, որովհետև արդար է նրա գործը: Հենց այդպես էլ լինելու է, ու ես պապիս կառուցած այս տան բակում իմ թռռանը պատմելու եմ տատիս առակը», - այս լավատեսությամբ է ավարտում իր մտորումները Լուսինե Սահակյանը: Պատերազմի դեմքը տեսած մեր երեխաները պատրաստակամ են նվիրվել հայրենիքի պաշտպանությանը: «Երազում եմ այն ըղձալի օրվա մասին, երբ Արցախս մասնատված չի լինի, երբ ամրոցներս փլված չեն լինի: Դրա համար՝ «Եթե պետք լինի, այն գրիչը, որով հիմա ներթողում եմ քեզ, վաղը սուր կդառնա, որ պաշտպանեմ քեզ: Իմ Արցախ աշխարհ: Իմ սուրբ օրրան», - երդվում է Լուսինե Հայրապետյանը: Նպատակահամարձակ ճանապարհը դպրոցականները տեսնում են մեր միասնականության մեջ: «Հիմա մեր պատասխանատվության զգացումն ավելի մեծ է, որովհետև մենք ապրում ենք հազարավոր հերոսների չափարած կյանքերի փոխարեն: Իմ սերունդը քաջ գիտակցում է հայրենիքի զլխին կախված վտանգը: Ժամանակն է, որ բռնուցքվենք ու միասնական ուժով հայրենիքը հայ պահելու վե՛հ ուղին բռնենք», - գրում է Անի Գասպարյանը: Փորձություններ արցախցին շատ է տեսել, ու հենց դրանք են ամրապնդել նրա ոգին: Անհաջողությունները ժամանակավոր են, կարևորը ոգին է, որ կա, ապրելու, հարատևելու կամքը: Ասել է թե՛ հաղթանակներ դեռ կլինեն: Եվ դրանք կկռի նոր սերունդը:

«ԼՈՒՍԱՐԱՐ»

ՄԱՐԶԱԿԱՆ

ՄԱՐԶԱԿԱՆ ԴԱՏՐԱՏՈՒԹՅՈՒՆԸ՝ ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ԴԱՂՊԱՆԵԼՈՒ ԵՐԱՇԽԻՔ ԵՎ ՈՉ ՄԻԱՅՆ



Մարզիկի զարգացման, մարզական ծեռքերունների եւ, ինչու չէ, նաեւ կյանքում հաջողակ լինելու գործընթացում մեծ դեր ունեն մարզիչները: Իզուր չէ, որ մարզիչները համեմատվում են ծնողների կամ դաստիարակների հետ: Չէ՞ որ բացի մարզելուց, մարզիչները նաեւ անփոխարինելի խրատատուներ են ուսուցիչներ են: Մարզիչ կոչումն ունեցող ոչ բոլոր մարզկանց է հաջողվում արժանապատվորեն կատարել մարզական բարդ ու պատասխանատու աշխատանքը: Արցախի «Օյամա» կիոկուշին կարատե դո ֆեդերացիայում հետախույզական են վերաբերվում մարզչի աշխատանքին եւ մարզական կազմը համարում են բանինաց մարզիչներով: Իր գործին նվիրված ու մարզիկներին ամենայն պատասխանատվությամբ մարզող մարզիչներից է Դավիթ Ավետիսյանը, որի հետ հետաքրքիր հարցազրույցում պարզաբանեցինք կիոկուշին կարատե դո մարզածելի հետ կապված հարցեր եւ՝ ոչ միայն:

Ծնվել է 2000թ. նոյեմբերի 13-ին Ստեփանակերտում: Սովորել է 10-րդ դպրոցում, հետո տեղափոխվել 11-րդ ավագ դպրոց եւ ավարտել: «Ֆիզիկուլտուրա եւ սպորտ» մասնագի-

տական կրթություն ստանալու նպատակով ընդունվել է «Գրիգոր Նարեկացի» համալսարան: Այժմ առաջին կուրսի ուսանող է: 2019-2021թթ. ծառայել է Պաշտպանության բանակում: Մասնակցել է ծառայության ընթացքում վրահասած չարաբաստիկ պատերազմին:

- Դավիթ, ինչպե՞ս ընկղմվեցիք կարատեի աշխարհ:

- Վեց տարեկան էի, երբ սկսեցի առաջին մարզումներս ավանդական կարատե մարտարվեստում: Փոքր հասակից ինձ գրավում էր կարատեն իր մարտական տեխնիկայով, ուժեղ հնարներով: Սկզբնական շրջանում պարապում էի մարզիչ Արման Սարգսյանի մոտ: Շուրջ վեց տարի պարապելուց հետո հանգամանքների բերումով մարզիչը դադարեցրեց իր գործունեությունը: Ես չէի ուզում թողնել կարատեն, հատկապես որ բավականին հաջողություններ ունեի արդեն: Սկսեցի հետաքրքրվել, թե որտեղ կարող եմ շարունակել մարզումներս: Մի քանի անգամ նայեցի կիոկուշին կարատե դո մարտարվեստի մարտեր, որոնք ինձ շատ դուր եկան: Որոշեցի փոխել մարզումներս ո՞րն է ընդգրկվեցի կիոկուշին ֆեդերացիա՞ մարզիչ Արմեն Պետրոսյանի խումբ: Մոտ երկու տարի պարապելով՝ տեղափոխվեցի ֆեդերացիայի մարզիչ, եվրոպայի եւ աշխարհի չեմպիոն Արթուր Առուշանյանի խումբը: Մինչեւ այսօր շարունակում եմ պարապել նրա մոտ նաեւ որպես մարզիկ:

- Դավիթ, ինչպե՞ս ընկղմվեցիք կարատեի աշխարհ:

- Դավիթ, ինչպե՞ս ընկղմվեցիք կարատեի աշխարհ:

- Կարատեի բոլոր ոճերում կան նմանություններ ու տարբերություններ: Ընդհանրապես, բոլոր մարտարվեստներն ունեն մեկ ընդհանուր գաղափար՝ կատարելագործվել: Սակայն ժամանակի ընթացքում կազմավորվել են մարտարվեստի

տարբեր դպրոցներ, ֆեդերացիաներ, որոնք ավելի շատ ունեն տարբեր սկզբունքներ, քան՝ նման: Ավանդական կարատեում ավելի շատ են ուշադրություն դարձնում կատարողին: Իհարկե, դա շատ լավ հնարավորություն է տալիս մարզիկին հղկելու իր կատարման տեխնիկան, ֆիզիկապես եւ մտավոր զարգանալու համար: Կիոկուշինում ավելի շատ ուշադրություն են դարձնում մրցույթներին: Կիոկուշին կարատեն ավելի կոպիտ հնարներ է պարունակում, որոնք ավելի հարմար են մարտ վարելու համար: Մարզիչը պետք է ընտրություն կատարի, թե որ ոճն է իրեն ավելի համապատասխան: Նպատակային կլինի, որ մարզիկն իր ժամանակն ու էներգիան ներդնի մեկ ոճի վրա, բայց դա իր ցանկությունն է: Ամեն դեպքում, մարզիչը կարող է խորհուրդ տալ եւ օգնել, որպեսզի մարզիկն իր համար ճիշտ ընտրություն կատարի:

- Դավիթ, ինչպե՞ս ընկղմվեցիք կարատեի աշխարհ:

- Կարատեի բոլոր ոճերում կան նմանություններ ու տարբերություններ: Ընդհանրապես, բոլոր մարտարվեստներն ունեն մեկ ընդհանուր գաղափար՝ կատարելագործվել: Սակայն ժամանակի ընթացքում կազմավորվել են մարտարվեստի

բացի, նախընտրած մարզածելի նվիրված լինելով եւ լավ տիրապետելով՝ մարզական աշխատանք կատարելու առաջարկություն ստացա Արթուր Առուշանյանից: Տեսա, որ երեխաները սրտանց պարապում են կիոկուշին կարատե եւ ուզում են մրցույթների մասնակցել ու բարձրացնել մեր դրոշմը: Դա ինձ շատ ոգեւորում է: Ընդունեցի առաջարկը եւ առաջին պարապումներս սկսեցի Այգեստանի համայնքում: Սիրով զբաղվում եմ իմ սաների հետ: Ներկա պահին իմ թիմում մարզվում է շուրջ 40 հոգի: Նախատեսում ենք նաեւ Ստեփանակերտում մոր խումբ հավաքել եւ աշխատել 5-րդ դպրոցում:

- Որպես մարզիչ հավանաբար աշխատում եք ավելի շատ մրցումների նախապատրաստել մարզիկներին:

- Աշխատում ենք այդ նպատակով: Բայց միեւնոյն ժամանակ զգոմ ենք այն հարցում, որ, ելնելով մեր կարողություններից, մեզ ուղղակի անհրաժեշտ են կոփված, ֆիզիկական բարձր տվյալներ ունեցող մարզիկներ, որոնք պոտենցիալ մարտիկներ են: Մեր ֆեդերացիայում կոլեկտիվը համերաշխ է, մարզական կազմն ընտիր է: Իսկ ֆեդերացիայի նախագահն ամեն ջանք գործադրում է, որպեսզի մարզիկները պատշաճ պարապեն, առաջ գնան, մասնակցեն մրցումներին եւ հաղթեն: Բայց մենք քաջ գիտակցում ենք, թե ինչ մարտահրավերներ կան մեր առջեւ: Կիոկուշինը միայն մրցումները չեն: Դրա տեխնիկան ներառում է նաեւ առանձին ինքնապաշտպանություն տարբեր մարզիկացի համար: Նախատեսում ենք մեր ֆեդերացիայում կազմակերպել նաեւ այդ ուղղությամբ պարապումներ:

- Դուք նաեւ պատերազմին եք մասնակցել: Որե՞ն առավելություն ձեզ վրա զգացե՞լ եք որպես սպորտով պարապած մարդ:

- Սպորտով պարապած մարզիկ

ԱՌԱՋԻԿԱՅՈՒՄ ՄՊԱՍԿՈՒՄ ԵՆ ՄԵՑ ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐ



Արցախի մարզիկները շարունակում են մասնակցել Հայաստանի Հանրապետությունում կազմակերպվող սպորտային առաջնությունների: Սպորտում հաճախ օգտագործվող գաղափար կա, թե կարելու է մասնակցությունն է, ոչ թե հաղթանակը: Բայց Ստեփանակերտի ՄՊՄԴ մուայթայի մարզիչ Ալեքսան Աղաբալյանի սաներն առաջնորդվում են այլ գաղափարով. եթե մասնակցել, ապա միայն հաղթելու համար:

- Ալեքսան, նայելով մուայթայի մարտեր, այնպիսի տեսարանների ենք հաճախ ականատես լինում, որ դժվար է տարբերել մարզածելուն թուլատրելի հնարները իրական մարտից: Ինչպե՞ս են իրենց դրսևորում մարզիկները մրցույթներում եւ դրանցից դուրս:

- Մուայթայը, իսկապես, չոր սպորտաձև է: Այն համարվում է 8 վերջույթների մարտ: Այսինքն, թուլատրվում է աշխատել 8 վերջույթներով: Համապատասխանաբար, մարզածելը վնասվածքավորանգ է: Մարզիկները պետք է ֆիզիկական լավ կոփ-

ված լինեն: Բացի դրանից, պարապումների ժամանակ աշխատում ենք ավելի շատ կամքի ուժ գարգացնել սաների մոտ: Ժամանակի ընթացքում մարզիկները հարմարվում են մարզածելին եւ նույնիսկ սովորում են չվախենալ վնասվածքներից: Դա օգնում է մրցույթների ժամանակ դիմանալ ցավին, մարտում եղած դժվարություններին եւ հաղթել: Մրցույթներից դուրս էլ այս մարզածելով զբաղվող մարզիկները հիմնականում դիմացկուն են, առանձնանում են ուժեղ կամքով եւ ֆիզիկական լավ տվյալներով:

- Այսինքն, ընդունելությունը հիմնականում կատարում եք ի սկզբանե ֆիզիկապես ուժեղ մարզիկներից:

- Այսինքն, ընդունելությունը հիմնականում կատարում եք ի սկզբանե ֆիզիկապես ուժեղ մարզիկներից:

կազմակերպում ենք առանց սահմանափակումների: Կարելու է մարզիկը ցանկություն եւ ծգտուն ունենա սպորտով զբաղվելու համար: Մնացածը մարզիչների աշխատանքն է: Մենք օգնում ենք, որ մարզիկը կարողանա ճիշտ դրսևորել իր ընդունակությունները եւ, զարգանալով, առաջ գնա:

- Ալեքսան, գիտե՞ք, որ 11 տարեկանից պարապում եք սպորտով, իսկ 16 տարեկանից նաեւ մարզական գործունեությամբ եք զբաղվում: Այսօր ունե՞ք շուրջ 90 սան, որոնց հետ



պարապում եք տարբեր խմբերում: Դրո՞Ֆեսիոնալ մարտեր եք ունեցել եւ հաղթել: Գրե՞ք մուայթայի եւ K-1 մարզածելի բազմակի չեմպիոն եք: 2015թ. K-1 մարզածելի աշխարհի առաջնության փոխչեմպիոն եք, 2016թ.՝ մուայթայի աշխարհի առաջնության բրոնզե մեդալակիր: Կարելո՞ր է, որ մարզիչն իր սեփական մարզական ճանապարհն անցած լինի:

լավ կարող է հասկանալ եւ մարզել իր սաներին: Մինչեւ հիմա էլ շարունակում եմ պարապել որպես մարզիկ եւ միաժամանակ մարզում եմ մարզադպրոցի սաներին: Իմ սաների մեջ կան եվրոպայի բրոնզե եւ արծաթե մեդալակիրներ, աշխարհի առաջնության մասնակիցներ: Ճանաչված մարզիկ Դավիթ Հայրապետյանը դարձել է պատանիների աշխարհի առաջնության չեմպիոն, K-1 եվրոպայի առաջնության չեմպիոն: Ունենք Գրե՞ք մուայթայի չեմպիոններ: 2020թ. մուայթայի աշխարհի վիրտուալ առաջնության չեմպիոն է ճանաչվել մեր մարզիկ Էդգար Բաբայանը:

- Մայիսի 14-17-ը ԳԳ մուայթայի առաջնության եք մասնակցել եւ վերադարձել հաղթանակներով: Պատմե՞ք դրա մասին:

- Արցախից մեկնել ենք 40 հոգով՝ 35 մարզիկ, 2 մրցավար, 3 մարզիչ: Առաջնությանը մասնակցել են 10-18+ տարիքային խմբերի մարզիկներ: Մեր սաները լավագույնս դրսևորել են իրենց: Դրա ապացույցն է այն, որ 20 մարզիկ զբաղեցրել է առաջին տեղը: 7 մարզիկ արժանացել է երկրորդ, իսկ 3 մարզիկ՝ երրորդ մրցանակային տեղերին: Որպես բարձր ցուցանիշներ արժանազան տվազույթն է թիմ է ճանաչվել Արցախի թիմը: Պարզեւստովել ենք մեդալներով, պատվոգրերով եւ գավաթով:

- Տեղյակ ենք, որ մասնակցի մարզիկների մեջ կան 44-օրյա պատե-

րազմում զոհված ազատամարտիկների զավակներ: Ինչպե՞ս են նրանք մրցումների ժամանակ հանդես գալիս:


- Բնականաբար, հետպատերազմյան շրջանում ընկճվածություն կա բոլորիս մոտ: Բայց մենք շարունակում ենք պայքարել յուրաքանչյուրս մեր գործով: Իմ սաներ՝ 16-ամյա Ավետ Դավթյանը եւ 11-ամյա Անդրեյ Ավետիսյանը պատերազմի հերոսների որդիներ են: Ինչպես իրենց հայրերը կամքի ուժ ինչպե՞սին հայրենիքի պաշտպանության համար, այնպես էլ իրենք են մրցույթի ժամանակ լրիվությամբ ներդրվում հանուն հաղթանակի: Անդրեյն ուզում է չեմպիոն դառնալ: Իր հոր՝ Սասուն Ավետիսյանի կամքն էլ էր դա:

- Քաջերից ծնվում են քաջեր, հերոսներից ծնվում են չեմպիոններ: Այդպե՞ս է:

- Այո: Ավետ Դավթյանը առաջնության հաղթող է ճանաչվել, զբաղեցրել է առաջին տեղը: Անդրեյ Ավետիսյանը եւս իրցել է՝ լավագույնս դրսևորելով իրեն ու զբաղեցրել է մրցանակային երկրորդ տեղը: Խոստումնալից մարզիկներ են, առաջիկայում մեզ սպասում են մեծ մրցաշարեր ու հաղթանակներ: Պատրաստվում ենք մասնակցել միջազգային մրցաշարերին, եվրոպայի եւ աշխարհի թե՛ երիտասարդների, թե՛ մեծահասակների առաջնություններին: Եթե մյուս մարզածելներում ասում են, թե կարելու է մասնակցությունն է, ապա մենք կարելու ենք հաղթանակել: Մենք ամեն ինչ անելու ենք, որպեսզի Արցախի մարզիկները հաղթեն նաեւ միջազգային դիմումներ:

ԳՐԱԿԱՆ

ԹԵՎԱՎՈՐ ՊՈՆԶԻԱ



լիս երգում են հոգու աչքերը», «Առանց քեզ՝ երկնքի կապույտն էլ անգույն է» և «Պատերազմ՝ պատերազմից հետո» խորագրերը, արտացոլված են մեր ժողովրդի ճակատագրի մերօրյա հատվածը, հայ մարդու հարուստ ներաշխարհը: Եվ գոհունակությամբ ընդգծեն, որ Ալիսայի բանաստեղծական պատկերավոր խոսքն իրենն է, իրենն են հյուսվող գորգի բուր

ասացվածքի հասնող մտքերից բերեն մի շարք օրինակներ. «Աստծո օրհնանքը պետք է այն մորը, ում ծայրից խլանում է երկինքը, այն հորը, ում լռությունից ճաքում է հողը», «Հողը բուռ-բուռ լցվել է մեր երակները», «Հիշողությունը դրոշմվել է ներկայի հայացքի մեջ», «Կյանքն ու մահը գրկել են իրար», «Հայրենիք, ես այն մանուկն եմ, ով քո երակների միջով հոսող արյամբ է սնվում» և այլն, և այլն:

Հողն արյունածոր կարմիրով է ներկել օդը, Միրտ չմնաց, Կորուստների ցավից մեռնում է ժամանակը:

Այսչափ փորձիկ հողակտորում՝ Այսքան շատ գերեզմաններ ինչպե՞ս են տեղավորվում:

Ալիսայի սույն գրքի առյուծի բաժինը սիրո երգերն են: Որպես սիրերգակ նա գալիս է դարերի խորքից: Նրա ուղին սկիզբ է առնում Կոստանդինոպոլիսից (13-րդ դար), հասնում Նահապետ Քուչակին (16-րդ դար), նոր թռիչք առնում Սայաթ-Նովայից (18-րդ դար): Ապա ունկնդրում է Վահան Տերյանին, Չարենցին, Պարուր Սևակին ու Սիլվա Կապուտիկյանին, իրեն ներկայացնում որպես նրանց ժառանգորդ դուստր, որի համար սերը հավատարմության, օջախապաշտության, ազգային արժանապատվության, խիզախության, երեսաների դաստիարակության սուրբ թթխմորն է, սերուցքը, պատիվը: Սիրային երգերում նա չի քարոզում, նրա գեղագիտական իդեալն ընթերցողը կարդում է երգերի ենթաբնագրային արժարժաններում, դրամատիկ ապրումների հուլովումներում: Նա հայկական սուրբ օջախների գեղեցիկ սովորությունների, ավանդույթների մորօրյա խորհրդատուն է: Այդ դիտարկումի բանաստեղծական փայլուն օրինակները շատ են:

Ալիսայի դիտարկմամբ «Սերը հայտնվում է անսպասելի»: Դեռ ավելին: Նա խոստովանում է, որ ինքն օդի մեջ անգամ զգում է իր սիրած էակի ներկայությունը, և դեմքն այրվում է նրա ջերմությունից: Ալիսայի քնարական հեղուկներն զգացմունքների տարափից հոգեցունց ապրումներ է ունենում և ուզում է հավելի սիրո շուրթերին, զգալ շնչառությունը, լռել, չխոսել, դրանով իսկ լռությամբ արտահայտել ամենակարևորը:

Քեզ մոռանալու փորձերս Ինձ բերում հասցնում են ուղիղ քո գիրկը:

Թռչունն այնքան մոտ է երկնքին, Որ կապույտը շոյում է նրա թևերը, Երևակայության մեջ՝ երկնքի բոլոր աստղերը մեր գրկում են:

Ալիսան ընդունում է լռության մեջ հուլով սիրո խոսքերը, թևավորվում, երբ սիրած էակի հայացքի մեջ տեսնում է սեր, խոնարհում: Սակայն ծանր ապրումներ է ունենում,

երբ պահվածքն ու զգացածը հակասում են միմյանց, այդ պահին «Կրակներն անշունչ ընկնում են» աչքերի մեջ, և սպառվում է՝ առանց նրա:

Սիրերգակ Ալիսա Բաղդասարյանի համար սերը կարոտ է, ապրումների սարսափի դեմ «միակ դեղահաբը»: Դիմելով սիրուն՝ նա խոստովանում է.

Առանց քեզ՝ ամեն ինչ զուրկագրկում է, Ձգում են տարածության մեջ շնչասպառ երանների անկունը, Որոնք գծվեցնող կարոտից ընկնում են

սառցակալ քարերի գիրկը. Ամեն ինչ անհուսալի ցավոտ է՝ Առանց քեզ:

Դու մի նոր երանգ մտքորդ իմ կյանք. Մրտի դող, ժպիտ, Մտքի հրճվանք...

Իսկ սիրո ծիածանի փայլատակումի մի ուրիշ հատվածում հնչում է նրա սիրո բերկրանքը.

Համաձայնվիր՝ Իմ ու քո կյանքը Մի լավ բան մտավ, Տառապանքի մեջ Նիրհած իմաստությունն Արթնացրեց մեզ Եվ ասաց՝ ապրելը այս է, Ահա այսպես...

Անվանի գրող Մկրտիչ Արմենը մի առիթով գրել է, որ ժժվար է պատմել քնարական բանաստեղծությունը, այն ընթերցանել է պետք:

Ալիսայի քնարաշունչ երգերը, որպես մեր արդի սիրերգության նմուշներ, գալիս են կրկին ու կրկին ասելու մեր ժողովրդի թևավոր խոհն ու դասը. «Սերը կյանք է, կյանքը՝ սեր»:

Բարի ծանփա են մտքում նման երգափնջին և հավաստում, որ ընթերցողներն այն դարձնելու են սեղանի բուրումնավետ զարդ:

Սուկրաթ ԽԱՆՅԱՆ Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ալիսա Բաղդասարյանը հանդես է եկել բանաստեղծական նոր գրքով, որը կրում է «Պատերազմից հետո» վերնագիրը: Մինչև այս ժողովածուն նա ընթերցողի սեղանին է դրել «Խոտի աղերսանք», «Թիթեռախաղ», «Հայացքի մերկություն» և «Գրիչս երազ է տեսնում» երգերի փնջերը, որոնք բույրն ազդարարել է Ալիսայի ստեղծագործական գարնանային շունչը, ընթերցողի սիրտը շոյելու Աստվածամկեր կարողությունը:

Երկրորդ, երրորդ անգամ վերընթերցելով այս նոր գիրքը, գեղագիտական հաճույքի հրամայականով, սրտացավ բարեկամի զգացողությամբ շնջացի. «Ապրես, Ալիսա՛, հիրավի, դու քո ընթերցողի սրտի հետ ես գրուցում»:

Ի դեպ, նշեն, որ ամեն մի բանաստեղծ չէ, որ դառնում է ընթերցողի սրտի թարգմանը: Այո, գրում են, հրատարակում, սակայն անցնում են ընթերցողի սրտի կողով՝ անտարբեր ու սառնասիրտ:

Մեծն Վիլյամ Սարոյանին գրաքննադատները մի անգամ հարցրել են՝ երիտասարդական պոեզիային հետևո՞ւմ է, թե՞ ոչ: Նա պատասխանել է, որ ինքն ուշադիր կարդում է տպագրված համարյա բոլոր գրքերը: Պոետական արվեստի առումով ամեն ինչ իր տեղում է, միայն մի բան է պակասում՝ սիրտը:

Համաշխարհային գրականության բոլոր դասականները խորհուրդ են տվել գրելիս չմոռանալ Սարդու սիրտը, քանզի Սիրտ ասելով, առաջին հերթին հենց նկատի է առնվում Սարդը՝ հարուստ ներաշխարհով:

Ավելորդ չեն համարում այստեղ բերել անմահ Չարենցի հետևյալ խորհուրդները.

Երզը այնժամ է միայն քերթողից իր և դարից իր անցնում, Երբ առնչվում է կյանքին հուր միջուկով իր անանց... Կամ՝ Սեր, և՛ պայքար, և՛ քնար,- միասին եք դուք, միասին եք...

Կարդալով Ալիսայի երգերը՝ համոզվում ես, որ նա իր քնարական երգերում հուլովում է և՛ պայքար, և՛ սեր, որոնք առնչվում են «կյանքի հուր միջուկին»:

Ժողովածուում լուսաբանված թեմաները վերցված են կյանքից, կոնկրետ մեր օրերի եռքից: Բայց այստեղ մի շատ կարևոր հիմնախնդիր ծիկրակում է պոետական աշխարհի բազմաբնույթ շերտերից՝ ներկայացնելով բանաստեղծի մտածողության պատկերավորության և այն ափամեջ դնելու պահանջը:

Շտապեն նշել, որ Ալիսան ծնվել է բանաստեղծական երանգների հյուսվածքով, որպես սրտի թարգման, որպես Աստծո քարտուղար: Գրքի շարքերում, որ կրում են «Քեզ տեսնե-

լոր նուրբ-մետաքսե-բազմերանգ թելերը: Իր երգերում Ալիսան ինքն է՝ խոհերի ջերմությամբ, պատկերների թարմությամբ, ժամանակակիցների երազանքով, ամբողջության մեջ՝ հայաշունչ-հայապատկեր հյուսվածքներով:

ճակատային-վերամբարձ ճիչեր չկան նրա երգերում: Գրքի հենց առաջին էջերում Ալիսան է՝ որպես քնարական հերոսուհի, որպես սիրող կին, սրտացավ քույր, տագնապած մայր, որը բոլորի անուցից շնջում է. «Պատերազմն ինձնից խլում է քեզ... Իսկ արյան շիթերը շարունակ հայրենիք են նկարում»:

Իր ժողովրդի դուստրն է Ալիսան՝ խաղաղատենչ, արարող, լավատես, հաղթանակող.

Բայց, երբ պատերազմը պարտադրանք է դառնում, Հայրենիքս քո դեմքն է ստանում, Եվ ես քեզանից խլում եմ ինձ, Որ հայրենիքս հաղթանակ տանի:

Ալիսա Բաղդասարյանը հայրենասիրություն չի խաղում, չի ծչում, որ մենք քաջասիրտ ենք, հայրենապաշտ: Նա իր արցունքները խառնելով ազգի արցունքներին, ընկնում է նրա գիրկն ու երդվում.

Միտքս անկումներից վեր է բարձրանում, Իսկ հաղթանակա՝ բարձրանալ-կանգնելն է: Գրկիր ինձ, Քո գիրկը ոգով զինելու մեծ հասկություն ունի:

Բանաստեղծուհի Ալիսան պատերազմից-պատերազմ, ցավից-հույս, մաքառումից-գալիք քայլող ժողովրդի անձնուրաց դուստրն է, որը Ռուզանի ու Գայանեի ոգով կոփված, չխուսափելով ճշմարտությունից, հայտարարում է.

Արցախում Կռիվ-կռիվը դարձել է սերնդափոխության կարևոր նախապայման, Հայրերը զավակներից ինչքի փոխարեն Պայքարի ոգի են կտակում:

Նման օրինակները խոսում են, կենսափիլիսոփայական ընդհանրացումներով համեմատված, մեկը-մյուսից խորիմաստ, մեկը-մյուսին լրացնող պատկերներով թևածող: Առած-

ՀԱՄԱՐԱՐ | Հիմնադիր՝ «Լուսարար» ՓԲԸ | Ստեփանակերտ, 7. Թումանյան փ. 95, ☎ 94-38-99, E-mail: gorcert@mail.ru: www.lusarar.info | Մեջբերումների եւ փաստական տվյալների ստուգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում: | Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլյուս» ՍՊԸ-ում: Ծավալը՝ տպագրական 3 մամուլ: Ստորագրված է տպագրության՝ 31.05.2021թ.:

«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությամբ: